

ՍԴՅԿ Հայաստանի Կազմակերպութեան 9-րդ Համագումարի Յայտարարութիւնը

Նոյեմբեր 24-ին Երեւանի մէջ տեղի ունեցաւ ՍԴՅԿ Հայաստանի կազմակերպութեան 9-րդ համագումարը, որու աւարտին հրապարակուեցաւ հետեւեալ յայտարարութիւնը.

1. Ներքին քաղաքական հարցերում ՍԴՅԿ-ն շարունակում է համարել, որ կա ահռելի ընկերացիւն անարդարութիւններ, օլիգարխիա եւ մենաշնորհ, որի դէմ պայքարին է կոչուած նաեւ ՍԴՅԿ նորընտիր վարչութիւնը: ՍԴՅԿ-ն որդեգրում է լաւին լաւ, իսկ վատին վատ ասելու քաղաքականութիւնը, ՍԴՅԿ-ն իրեն յայտարարում է բանուորի, գիւղացու, հալածեալի պաշտպան եւ աշուհներ լինելու է այնտեղ, որտեղ խախտուած են Հայաստանի քաղաքացիների իրաւունքները: Մեր ուշադրութեան կենտրոնում է լինելու յատկապէս աշխատաւոր մարդու իրաւունքները, որոնց համատարած խախտումներն ակնառու են:

2. Արտաքին քաղաքական առումով ՍԴՅԿ-ն զգուշաւոր լաւատեսութեամբ ողջունում է Մաքսային Միութիւն անդամագրուելու Հայաստանի իշխանութիւնների քաղաքական որոշումը, սակայն նաեւ կոչ անում Եւրոպայի հետ շարունակել քաղաքական շփումներն ու գործընթացները:

3. Արցախի հարցը անկիւնադարձային է Հնչակեան կուսակցութեան համար: Մեզ համար ընդունելի է ցանկացած որոշում, որը ընկալելի կը լինի Արցախի քաղաքացու համար: Վստահ ենք, որ Հայաստանն էլ եղել եւ մնում է Արցախի անկախութեան ու անվտանգութեան երաշխիքն ու ապահովողը: Կարծում ենք, որ օր առաջ Արցախի իշխանութիւնները պետք է մաս կազմեն բանակցային գործընթացին:

4. 2015 թ-ի Յեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ ՍԴՀնչակեան կուսակցութիւնն իր ուժերի ներածի չափով աշխարհով մէկ իր քոչը կառուցների միջոցով շարունակելու է լոբբիստական քաղաքականութիւնն ուղղուած թուրքական ժխտողականութեան դէմ: Մենք հասնելու ենք Հայոց Մեծ Եղեռնի միջազգային ճանաչմանը եւ այդ աղէտի հետեւանքով թրքական իշխանութիւնների կողմից հատուցմանը: Այս առումով ողջունում ենք նաեւ Յեղասպանութեան 100-ամեակի Յանձնաժողովը, որը համախմբում է համայն հայութեանը:

Ս.Գ. Հնչակեան կուսակցութեան 9-րդ համագումարի պատուիրակները ընտրեցին վարչութեան նոր կազմը:

Հայաստանի մէջ Աղբատութիւնը Նուազած է Սակայն Մէկ Միլիոն Հոգի Կը Մնան Չքաւոր

Ազգային վիճակագրական ծառայութեան հրապարակած զեկոյցին համաձայն՝ 2012-ին Հայաստանի մէջ աղբատութեան ցուցանիշը նուազած է՝ կազմելով 32,4 տոկոս:

Այս թիւը աւելի քան 2,5 տոկոսով պակաս է 2011-ի ցուցանիշին, որ կը կազմէր 35 տոկոս:

Թէեւ աղբատներու թիւը նուազած է, այդուհանդերձ Հայաստանի իւրաքանչիւր երրորդ բնակիչը աղբատ է, որոնց մէջ ծայրայեղ աղբատները կը կազմեն 2,8 տոկոս, իսկ շատ աղբատները՝ 13,5 տոկոս:

Այս տոկոսներուն համաձայն, միայն պաշտօնական տուեալներով Հայաստանի մէջ կայ մօտ 1 միլիոն աղբատ:

Զեկոյցը հրապարակելով՝ Ազգային վիճակագրական ծառայութեան տնային տնտեսութիւններու հետազոտութիւններու բաժնի պետ Դիանա Մարտիրոսովան յայտնեց, որ աղբատներու թիւով առաջինը կը շարունակէ մնալ Շիրակի մարզը՝ 46 տոկոս, յաջորդը Կոտայքի մարզն է՝ 42,5 տոկոս աղբատութեամբ:

Տնտեսագէտ վահագն Խաչատրեան յայտնեց, որ ինք չի վստահիր հրապարակուած թիւերուն: Այնուհանդերձ, ծանօթ ըլ-

լալով աղբատութեան ցուցանիշը հաշուելու ընթացքին կիրառուող մեթոտաբանութեան, տնտեսագէտը կը յայտնէ որ, դեռ բարեխիղճ գտնուած են - «Իրականութիւնն, իհարկէ, այլ է: Իրականութիւնն այն է, որ բոլոր դէպքերում, եթէ նոյնիսկ այդ ենք ասում, Հայաստանի Հանրապետութեան ազգաբնակչութեան մէկ երրորդը փաստօրէն աղբատ է ապրում: Դա Հայաստանի Հանրապետութեան իմիջի համար լաւ բան չէ: Սա նաեւ պէտք է ահագանգ լինի, կամ ուղղակի զգուշացում իշխանաւորներին, որ՝ տեսէք ինչպիսի երկիր ենք կառուցում»:

Թէպէտ պաշտօնական տուեալներով վերջին երկու տարիներուն աղբատներու թիւը նուազած է, սակայն 2008-ին հետ բաղդատած մօտ տասը տոկոսով աւելի է: Պետական պաշտօններու համաձայն, այս մէկը կը բացատրուի համաշխարհային տնտեսական ճգնաժամով, մինչդեռ փորձագէտի կարծիքը այլ է:

«Մի ուրիշ հանգամանք էլ կայ, որի վրայ պէտք է ուշադրութիւն դարձնել՝ ովքեր են այն նոր մարդիկ, որոնք դարձել են աղբատ: Նրանք արդեօ՞ք այն մարդիկ

Շաբ.ը էջ 5

Մասնակցելով Հանդերձ Վիլնիւսի Գագաթի Ժողովին Հայաստան Նպատակ Չունի Ետ Կանգնելու Մաքսային Միութենէն

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան կը մասնակցի, այս օրերուն Լիթուանիայի մայրաքաղաք Վիլնիւսի մէջ տեղի ունեցող Եւրոպական երկիրներու գագաթի ժողովին, որու ընթացքին շարք մը երկիրներ պիտի ստորագրեն Եւրոպայի հետ Ընկերակցութեան Համաձայնագիր: Նախապէս ստորագրող երկիրներու շարքին կը գտնուէր նաեւ Հայաստան:

Հայաստանի Ազգային Ժողովի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Արտակ Զաքարեան «Ազատութիւն» ռատիո-ովայանին յայտնած է որ, Հայաստանի պարագային ամէն ինչ յստակ է եւ Հայաստան այժմ կը գտնուի Ռուսաստանի գլխաւորած Մաքսային Միութեան անդամակցելու գործընթացին մէջ, իսկ յառաջիկային պիտի շարունակէ քայլերը՝ Եւրասիական Տնտեսական Միութեան անդամակցելու ուղղու-

թեամբ: «Այժմ Եւրամիութիւնը ինքը պէտք է յստակեցնի իր քայլերը», - շեշտած է Զաքարեան:

«Հայաստանի պարագայում ամէն ինչ յստակ է, դրա համար մենք կը սպասենք մինչեւ Եւրամիութիւնը եւս իր մօտեցումները կը յստակեցնի ընդհանուր առմամբ Արեւելեան Գործընկերութեան ծրագրի շրջանակներում: Դրա համար դեռ ժամանակ կայ», - աւելցուցած է Զաքարեան:

Անդրադառնալով այն հարցին, թէ այդ ի՞նչ հրաշք տեղի ունեցաւ, որ եւ Հայաստանը, եւ Ռեքանիան վերջին պահուն որոշեցին ետ կանգնիլ Եւրոպայի հետ Ընկերակցութեան Համաձայնագիրէն, : Արտակ Զաքարեան ըսած է, թէ Հայաստան որեւէ փաստաթուղթ է ետ չէ կանգնած եւ տեղի ունեցած գործընթացներուն մէջ

Շաբ.ը էջ 5

Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան Հանդիպումը Արցախի նախագահ Բակո Սահակեանի հետ



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, մասնակցութեամբ ՍԴՀԿ Կեղը. վարչութեան անդամ Տօքթ. Համբիկ Սարգսեանի, Շրջանի վարիչ Մարմնէն Գաբրիէլ Մոլոյեանի, Սուրէն Խոսրոսեանի եւ «Մասիս» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր Տօքթ. Արշակ Գազանճեանի, Նոյեմբեր 26ին, Կլենտէյլի Հիլթոն պանդոկի մէջ, հանդիպում մը ունեցաւ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանի հետ: Սոցիալ Դեմոկրատիան ներկայ էին նաեւ Արցախի Կեդրոնական տեղեկատուական վարչութեան վարիչ՝ Դաւիթ Պապայեանը, Ուաշինկթընի մօտ Արցախի ներկայացուցիչ՝ Ռոպերթ ԱԼետիսեանը, Լոս Անճելոսի մօտ նորանշանակ Հայաստանի Աւագ Հիւպատոս՝ Սերգէյ Սարգիսով եւ փոխ հիւպատոս՝ Տիար Արտակ Գալստեան:

Շուրջ աւելի քան մէկ ժամ տեւող սոցիալ հանդիպման ընթացքին քննարկուեցան այլազան հարցեր, գլխաւորաբար վարդենիա-Մարտակերտ մայրուղիի շինարարութիւնը, Արցախի անկախութեան ճանաչումը Հայաստանի կողմէ, ինչպէս նաեւ՝ Արցախն ու տարածաշրջանը յուզող այժմէական այլ հարցեր եւ մարտահրաւէրներ: Իսկ ինչ կը վերաբերի մաքսային նոր պայմանագրի ծրագրին՝ Պրն. նախագահը դիտել տուաւ թէ՛ «Ասիկա Ռուսաստանի կողմէ որեւէ ձեւի ճնշում մը չէ, այլ տնտեսական իրագործում մը, որուն հետեւանքով կտրուկ աճելու է պետական եկամուտները»:

Սոցիալ հանդիպումը աւարտեցաւ բարեկամական ջերմ եւ անկեղծ միջնորոտի մը մէջ, մաղթելով նորանոր յաջողութիւններ եւ շարունակական վերելք ազատագրուած Արցախին:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Հայաստանի քանդուող մոնոպոլիան

ՀԱՎՈՐԲԱԴԱԼԵԱՆ

Ուսանողները մեծ շահեր են ստանում...

Մեծ շահեր են ստանում...

Նախ, այդպիսով կ'արձա- նագրուի Հայաստանի տնտեսու- թեան մեջ...

Այստեղ ուշագրաւ է մէկ այլ հանգամանք: Հայաստանի եւ Իրա- նի սահմանին հիդրոէլեկտրական...

ուել: Այստեղ իհարկէ շատ էական է, թէ ինչ է մտածում Ռուսաստա- նը:

Օրինակ, այն, որ Ռուսաս- տանն ակնկալում էր տէր կանգնել Հայաստանի էներգետիկ հզօրու- թիւններին...

Եւ այդ տեսանկիւնից հե- տաքրքրական է նաեւ Հայ-ամերիկե- ան տնտեսական յանձնաժողովի...

Ընդհանրապէս, աւիացիայի հարցում ԱՄՆ ցուցաբերում է բա- ւական նկատելի շահագրգռու- թիւն...

Ըստ ամենայնի, Հայաստանի հետ յարաբերութեան առումով քաղաքական բեկման անյաջող...

Այժմ կարծես թէ կատարում է ակնյայտ անցում տնտեսականին, բայց արդէն ոչ թէ ճեղքման, այլ հորատման տարբերակով...

«ԼՐԱԳԻՐ»

Պուտինը նման երաշխիք կը տա՞յ Հայաստանին

ԴԱԻԻԹՄԱՆՈՒԿԵԱՆ

Թուրքիայի վարչապետ Ռե- ջեփ Թայիբ Էրդողանին Նոյեմբե- րի 21-22-ը Մոսկուա կատարած...

ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալու- թեան հետ գրոյցում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդո- ղանը...

Հայկական կողմը բանակցութիւնների ժամանակ առաջադրում է միայն մէկ նախապայման՝ գործող ատոմակայանը կարող է փակուել, եթէ կառուցուի նորը

յայտարարել էր. «Էներգետիկայի ոլորտում լուրջ նուաճումներ կան, առաջընթաց կայ նաեւ զբօսաշր- ջութեան բնագաւառում: Թուրք- իայի եւ Ռուսաստանի միջեւ...

Թրքական ատոմակայանի 20- միլիարդանոց ծրագիրը յատկա- պէս Պուտինի հայաստանեան այ- ցից առջ կարելի է հետաքրքիր...

Հայաստանը նոյնպէս նոր ատոմակայան կառուցելու անհրա- ժեշտութիւն ունի, աւելին՝ միջա- զային կառուցների կողմից գոր- ծող ատոմակայանը փակելու շատ...

Սերժ Սարգսեան-Պուտին բա- նակցութիւններից յետոյ յայտա- րարուեց, որ «Ռոսատոմի» մաս- նագէտները, հայ փորձագէտների հետ համատեղ, պայմանաւորուել են...

առաջնորդների համատեղ յայտա- րարութիւնում ընդգծուեց է նոր ատոմակայանի կառուցման նա- խագծի ուղղութեամբ աշխատանք- ներ տանելու կարեւորութիւնը:

կում հանդէս գալ ատոմակայանի հետ կապուած նոր յայտարարու- թեամբ: Սա լիովին համահունչ կը լինի Հայաստանում ռուսական ռազ- մաբազանների աւելացման ՌԴ նա- խագահի մտադրութեանը:

«ՀԱՅԵԼԻ»

Massis Weekly advertisement with logo, contact info, and subscription rates.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վաղարշակ Յարութիւնեան. «Կանխուում է Պատերազմի Վերսկսման Հնարաւորութիւնը»

Պաշտպանութեան նախկին նախարար Վաղարշակ Յարութիւնեանը, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում գնահատելով ռուսական ռազմաքաղաքականութեան կէտերն աւելցնելու վերաբերեալ Հայաստանի կառավարութեան վերջին որոշումը, ասաց, թէ այդպիսով կանխուում է պատերազմի վերսկսման հնարաւորութիւնը:



Պաշտպանութեան նախկին նախարար Վաղարշակ Յարութիւնեան

«Եւ ինչքան բանակը հօր լինի, այնքան պատերազմի վերսկսման հնարաւորութիւնը քիչ կը լինի», - ասաց Յարութիւնեանը: Հարցին, թէ ինչ է կորցնում Հայաստանը, պաշտպանութեան նախկին նախարարը արձագանքեց. - «Վնասների մասին խօսելը այստեղ անտեղի էմ համարում, որովհետեւ մենք ենք դիմել, որպէսզի ռուսական բազան այստեղ տեղակայուի՝ ես դրա մասնակիցն եմ եղել, բազայի պայմանագիրը ես նախապատրաստել եմ եւ վաւերացրել եմ: Այնպէս որ, դա եղել է քաղաքական որոշում Հայաստանի կողմից, որը մենք իրականացրել ենք»:

Նախկին նախարարին յիշեցրինք, որ ռուսական ռազմաքաղաքականութեան անձանց մահուան հետ կապուած միջադէպեր, նաեւ կան գիւղացիներից բողոքներ, որ ռուսները իրենց վարելահողերը դարձրել են պոլիգոն եւ իրենք գրկուել են դրանք մշակելու հնարաւորութիւնից: Վաղարշակ Յարութիւնեանն արձագանքեց. - «Երբ լուծուում է զլոբալ խնդիր, անվտանգութեան խնդիր, բնական է՝ կան նաեւ վտանգաւոր հետեւանքներ: Այստեղ պէտք է յստակ հասկանալ՝ դա իրենց սեփականութիւնն է եւ ռուսական բազայի տեխնիկան դուրս է գալիս իրենց տրամադրուած տարածքներից՝ դա մի հարց: Եթէ այդպէս է, իհարկէ, պէտք է այդ հարցը դրուի ամբողջովին իշխանութիւնների առջեւ»:

«Աւելի շատ են մարդիկ սկսում մտածել «Ֆորպոստ» գաղափարի մասին: Ինքնիշխանութեան հարցի հետ կապուած ինչ կարծիքի էք», - այս հարցին էլ Յարութիւնեանը պատասխանեց. - «Անկախութիւնը, ինքնիշխանութիւնը՝ դա հռչակագիր չի, դա ասելով չի լինում: Այս քայլերը, որ արւում են, միայն այդ քայլերն են ամրապնդում մեր անկախութիւնը»:

Քաղաքացիական Շարժումների Նկատմամբ Հանրային Վստահութեան Աստիճանը

Ակնյայտ է, որ Հայաստանում քաղաքացիական հասարակութիւնը զարգացման որակապէս նոր փուլում է, որը օբիեկտիւ հիմքեր է տալիս փաստելու, որ մեր երկրում «երրորդ համայնքի» կայացումը այլեւս անշրջելի գործընթաց է: Այս նշանակալի ձեռքբերումը մի կողմից քաղաքացիական ազատութիւնների գործուն մեխանիզմների առկայութեան, իսկ միւս կողմից վերջին տարիներին տարբեր խնդիրների եւ արատաւոր երեւոյթների դէմ պայքարող քաղաքացիական շարժումների եւ իմբեքի արդիւնաւէտ գործունէութեան հետեւանք է: Այսօր այդ իմբեքը սկսում են մեծացնել իրենց ազդեցութիւնը ինչպէս տեղական, այնպէս էլ համապետական մակարդակներում որոշումներ ընդունման վրայ:

այդ իմբեքը: Նման բարձր գնահատականը նաեւ վկայում է այն մասին, որ մարդիկ կորցնելով քաղաքական ուժերի նկատմամբ վստահութիւնը, փորձում են այն գտնել քաղաքացիական շարժումների գործունէութեան մէջ, չնայած նրանք մեծ հաշուով տարբեր խնդիրներ ու առաքելութիւն ունեն հասարակութեան մէջ:

Հարցուողների 16%-ը չէզոք է վերաբերւում այդ իմբեքին, որն, ըստ ամենայնի, պայմանաւորուած է կա՛մ նրանց անտեղեակութեան, կա՛մ քաղաքացիական շարժումների գործունէութեան արդիւնքները չկարեւորելու հետ: Բաւականին փոքր թիւով հարցուողներ իրենց բացասական վերաբերմունքն են արտայայտել քաղաքացիական շարժումների գործունէութեանը:

«Բարոմետր» հետազոտավերլուծական թիւմը Tert.am-ի պատուերով Երեւան քաղաքում իրականացրած սոցիոլոգիական հետազոտութեան շրջանակներում փորձեց պարզել մեր համաքաղաքացիների վերաբերմունքը քաղաքացիական-ակտիւիստական շարժումների գործունէութեան նկատմամբ:

Այսպիսով կարող ենք արձանագրել, որ մեր իրականութեան մէջ քաղաքացիական շարժումներն ու իմբեքը հանրութեան լայն շերտերի կողմից էական աջակցութիւն ունեն, այսինքն՝ բաւականաչափ լեզիտիմ են: Այս պայմաններում տեղական, տարածքային եւ համապետական իշխանութիւնները նրանց դէմքով լուրջ հակակշիռ են ձեռք բերում, դրանից բխող բոլոր հետեւանքներով:

Ներկայացուած պատկերը վկայում է, որ հարցուողների ճնշող մեծամասնութիւնը՝ մօտ 77%-ը «միանշանակ դրական» կամ «աւելի շուտ դրական» է գնահատում քաղաքացիական շարժումների գործունէութիւնը: Սա նաեւ նշանակում է, որ նրանք կողմ են այն խնդիրներին եւ մտահոգութիւններին, որոնք բարձրացնում են

Միաժամանակ, այս շարժումներն իրենց արդիւնաւէտութեան շարունակականութիւնը կարող են ապահովել, եթէ չքաղաքականացուեն եւ չուղղորդուեն, իսկ այսպիսի սպառնալիք նրանց համար միշտ առկայ է:

Բողոքի Ակցիա՝ Նախագահի Հրաժարականի Պահանջով



Կին ցուցարարներ կը վիճին ոստիկաններու հետ

«Տէր կանգնենք մեր երկրին», «Փրկենք Հայաստանը կործանումից», «Ոչ երդմնազանց նախագահին», «Մի թալանէք մեր գաւակներին» եւ նմանատիպ այլ կոչերով իշխանութիւններից դժգոհ մի քանի տասնեակ քաղաքացիներ Ազատութեան հրապարակից երթով շարժուեցին դէպի նախագահական նստավայր:

գնում է իր նստավայր»:

«Հայ մայրերն արդարութիւն են պահանջում» ֆեյսբուքեան նախաձեռնութեանը միացել էին արդէն շուրջ կէս տարի բողոքի ցուցեր անցկացնող ազատամարտիկները, ովքեր այնուամէն էին, որ նախագահ Սերժ Սարգսեանի վարչակազմը պէտք է անյապաղ հրաժարական տայ, քանի որ ի վիճակի չէ արդարացի կառավարել երկիրը: Ղարաբաղեան պատերազմի ազատամարտիկ Սուսաննա Մարգարեանն ասում էր, թէ համբերել այլեւս չեն կարող. - «Այդքան ինդրեցինք՝ չօգնեց, պահանջեցինք՝ չօգնեց: Հիմա կոչով դուրս ենք եկել, հիմնական պահանջ ունենք, որ իշխանափոխութիւն լինի»:

Յուցարարները ճանապարհի մեծ մասն անցան առանց խոչընդոտ, սակայն երբ նրանց միայն մէկ խաչմերուկ էր բաժանում նախագահական նստավայրից, ոստիկանները փակեցին ճանապարհը: Երեւանի փոխօստիկանապետ Վալերի Օսիպեանը կտրեց նրանց ճանապարհն ու յայտարարեց, թէ երթը կարող են շարունակել նախագահական նստավայրի դիմացի մայթով:

71-ամեայ Զուլիետա Մելքումեանը ցուց էր տալիս նախաձեռնութեան անդամների կողմից պատրաստուած մի խճանկար, որտեղ քաղաքական ուժերին, յայտնի գործիչներին պատկերել էին ճանապարհային նշանների տեսքով: Բողոքող մի կին էլ իր հետ մետաղեայ թաս էր բերել, որը պատրաստուած էր օգտագործել որպէս հանգանգ եւ այդպիսով ուշադրութիւն գրաւել. - «Գոնգը խփենք, որ դուրս գայ՝ իր ազգին չարհամարհի: Դուրս գայ տեսնի ազգը ինչի՞ համար է ելել»:

Մի քանի ռուպէ շարունակուող բուռն քննարկումից յետոյ ցուցարարները որոշեցին անցնել մայթը: Հասնելով նախագահական նստավայրի հանդիպակաց մայթ, ուր ոստիկանական պատ էր ստեղծուել, ցուցարարները կրկնեցին իրենց պահանջները:

Դաւիթ Շահնագարեան. «ԲՀԿ-ն Ու ՀԱԿ-ը Ղեկավարում են Ռուսաստանի Կողմից»

ԲՀԿ-ն ու ՀԱԿ-ը երբեք Սերժ Սարգսեանի պաշտօնանկութեան հարցը չեն բարձրացնի, որովհետեւ ղեկավարում են Ռուսաստանի կողմից: Այս մասին այսօր ասել է Դաւիթ Շահնագարեանը: «Նրա որոշումը հակասահմանադրական է, եւ ընդդիմութիւնն անմիջապէս պէտք է բարձրացնեն նրա պաշտօնանկութեան հարցը: Եթէ մի քանի պատգամաւորների չհաշուենք, այսօրուայ Աժ-ն կը ձեւակերպի այն, որ մենք անկախ պետութիւն չենք: Սերժ Սարգսեանի սկսած գործընթացը ոչնչացնում է մեր պետականութիւնը:

Աւելի քան երկու ժամ շարունակող ակցիայի մասնակիցներից ազատամարտիկ Սուսաննա Մարգարեանին հանդիպեց նախագահականի ներկայացուցիչը: Հանդիպումից յետոյ առաւել բողոքուած կինը յայտարարեց, թէ իրենք պահանջում են հանդիպել Սերժ Սարգսեանի հետ, այլ ոչ թէ նախագահականի որեւէ աշխատակցի: Իշխանութիւնների հրաժարականը պահանջող ցուցարարները նախագահին ժամանակ տուեցին մինչեւ Դեկտեմբերի 2-ը: Եթէ նրանց պահանջը չբաւարարուի, յաջորդ շաբաթ նրանք կը վերսկսեն բողոքի ակցիաները:

«Հայաստանում շատացել են քաղաքացիականացումները: Այն, ինչ տեղի է ունենում վարդան Պետրոսեանի հետ, քաղաքական հետապնդում է: Տեղի է ունեցել ողբերգութիւն, բայց դա դժբախտ պատահար էր: Ինչն էր խանգարում իշխանութիւններին փոխել նրա խափանման միջոցը, մասաւանդ, որ նա չէր փախչելու: Քաղաքական հետապնդում է իրականացում նաեւ Շահնագարեանի նկատմամբ: Կասկած չունեմ, որ քաղաքացիականացումների թիւը կ'աւելանայ»:

«Խորհրդարանի իշխանութիւն, թէ ընդդիմութիւն, նոյն հինգերորդ շարասիւնն է: Հայաստանի արտաքին քաղաքականութիւնն ամբողջութեամբ պայմանաւորուած է Ռուսաստանի, եւ նա երբեք Ղարաբաղի հարցը չի լուծի այնպէս, ինչպէս ուզում ենք մենք: 88-ի շարժումն

ԼՈՒՐԵՐ

Ինչպես էր Ադրբեջանական Վերնախաւը Հոգ Ծանում Բրիտանացի Պատգամաւորներին

Այս կազմակերպութիւնը գտնուում է Լոնդոնի բացառիկ Մեյֆեր շրջանում եւ բոլոր կուսակցութիւնների քաղաքական գործիչների համար կազմակերպում է հիւրընկալ ճաշկերոյթներ, պատմում է The Observer-ը: «European Azerbaijan Society»-ին (Teas) իբր անկախ առեւտրական կազմակերպութիւն է, որը Համայնքների պալատի ու Եւրախորհրդարանի անդամներին, ինչպէս նաեւ այլ պաշտօնատար անձանց պարբերաբար ուղարկում է նախկին խորհրդային հանրապետութիւն, որտեղ նրանց դիմաւորում են շքեղ հիւրանոցներում»,- գրում են լրագրողներ Զէյմի Դոուրն ու Շալուտա Լեթիմերը:


Պարբերականը ներկայացնում է անանուն մէկի պատմութիւնը: «Սա իսկական հանգիստ է, բազմաթիւ արժէքաւոր նուէրներ: Նուիրում են հիմնականում թանկարժէք մետաքսէ գորգեր, ոսկէ եւ արծաթէ իրեր, ոգելից խմիչք, սեւ խաւիար եւ գումար: Բաքուի մշտական նուէրն է՝ երկու կիլոգրամ խաւիար»: «Իրաւապահների մօտ հարցեր են ծագում այս համայնքի կողմից աշխարհի ամենախնայուն խան երկրներից մէկի իմիջբարելաւելու համար «խաւիարային դիւանագիտութեան» օգտագործման առթիւ մի ժամանակ, երբ պնդում են երկրում ընտրութիւնները կեղծելու, անկախ լրագրողների եւ ընդդիմադիր կուսակցութիւնների հանդէպ դաժան վերաբերմունքի մասին», - նշում է յօդուածում: Համայնքն անուանում են «ադրբեջանական էլիտար ընտանիքների խօսնակ, որի սեփականութեան ներքոյ է նաւթի եւ հանքարդիւնաբերութեան ոլորտների գալի մասնաբաժինը» (Թերթի ձեւակերպումը): Պարբերականի տուեալներով՝ համայնքի նախագահը Թալէ Հեյդարովն է: Թերթի նրան այսպէս է նկարագրում. «Լոնդոնում բնակուող որդին Քամալադին Հեյդարովի որդին, արտակարգ իրավիճակների նախարար, որը նախագահ Իլհամ Ալիեւի մերձաւոր շրջապատից է եւ յաճախ

համարում է Ադրբեջանում ամենազղեցիկ մարդ»:

Ինչպէս գրում են հեղինակները, համայնքն ամուր յարաբերութիւններ ունի Վեամինիսթրի հետ: «Այն գաղտնի աջակցում է Ադրբեջանի հարցերով համակուսակցական խորհրդարանական խմբին ու սերտ յարաբերութիւններ է զարգացնում բոլոր քաղաքական ճամբարների հետ՝ կազմակերպելով շքեղ ընդունելութիւններ պատգամաւորների համար իրենց կուսակցութիւնների ամենամեայ կոնֆերանսների ժամանակ»,-ասում է յօդուածում: Փաստաթղթերի համաձայն համայնքը նուազագոյնը 71740 ֆունտ է վճարել պահպանողական պատգամաւորներին իրենց երկիր այցելելու համար, իսկ լեյբօրիստներին՝ 9700 ֆունտ:

Թերթը պնդում է, որ համայնքն ազդեցութիւն ունի նաեւ բրիտանացի գործարարների շրջանում: Անցեալ ամիս կազմակերպել է առեւտրական կոնֆերանս, որի ժամանակ քարոզում էին Բրիտանիայի մասնակցութիւնն Ադրբեջանի կեանքում: Քննադատների մօտ հարց է ծագում. միզուցէ Մեծ Բրիտանիան պէտք է ուշադրութիւն դարձնի Ադրբեջանում մարդու իրաւունքների խախտումներին, քան գազի հանքավայրերին: Human Rights Watch-ը Սեպտեմբերին յայտարարում էր. «Ադրբեջանի կառավարութիւնը նպատաւորաբար ռազմավարութիւն է իրականացնում այլակարծութեան սահմանափակման համար»: Սակայն նախագահական ընտրութիւններին հետեւող բրիտանացի պատգամաւորները ընդդիմանում են, գրում են հեղինակները: Այսպէս, Մայք Հենքոքն ասել էր, որ նոյնիսկ չնչին թերութիւններ չի նկատել: Թերթը պնդում է. «Հենքոքի օգնականն ու սիրուհին ինչ-որ ժամանակ 3000 ֆունտ էր ստացել համայնքի համար կատարած աշխատանքի դիմաց»: Հենքոքն ասել էր, որ դիտորդական առաքելութիւնը կիսում է իր կարծիքը, իսկ իր օգնականի աշխատանքը հրամանազրկում է խորհրդարանում ու

Հայաստանի Տնտեսութիւնը Ամենայ Շատ Մենաշնորհուածն Է Արեւելեան Եւրպայի Մէջ



Համաշխարհային Բանկի հրապարակած նոր զեկոյցի համաձայն, Հայաստանի տնտեսութիւնը ամենամոնոպոլիզացուածն (Մենաշնորհուած) է նախկին ԽՍՀՄ ու Արեւելեան Եւրոպայի երկրների շարքում: Այս մասին նշուած է Նոյեմբեր 27-ին Համաշխարհային Բանկի երեւանեան գրասենեակում ներկայացուած՝ «Հայաստանի տնտեսական աճի նոր մոդելի մշակում, կուտակում, մրցակցութիւն եւ կապ» զեկոյցում:

Գիւլումեանը, ով ներկայացնում էր զեկոյցը: Արդէն որերորդ տարին է, ինչ Հայաստանի իշխանութիւնները՝ ամենաբարձր մակարդակով, խօսում են բիզնեսի ու իշխանութիւնների տարանջատման, օլիգոպոլիտների դէմ պայքարի մասին, սակայն, տեսնում ենք՝ միջազգային ամենահեղինակաւոր կառույցներից մէկը՝ Համաշխարհային Բանկը, այսօր յայտարարում է, որ Հայաստանի տնտեսութեան մեծ մասը շարունակում է գտնուել օլիգոպոլիտների վերահսկողութեան ներքոյ:

Ըստ այդ զեկոյցի, մենաշնորհներին է պատկանում Հայաստանի տնտեսութեան մօտ 20%-ը (ինչը ամենաբարձր ցուցանիշն է յիշատակուած երկրների շարքում), իսկ օլիգոպոլիտների հետ միասին (երբ գերիշխում են 2-3 խաղացողներ)՝ մոնոպոլիտները վերահսկում են Հայաստանի տնտեսութեան գրեթէ 2/3-ը:

Նոյն այդ Համաշխարհային Բանկի ներկայացմամբ (որի մասին նոյնպէս նշուեց), մրցակցութիւնը այն կարեւորագոյն գործօնն է, որը թոյլ կը տայ դիւանագիտական զարգացնել Հայաստանի տնտեսութիւնը եւ ստեղծել նոր աշխատատեղեր: Մինչդեռ, ըստ Բանկի՝ գործազրկութեան մակարդակը Հայաստանում՝ «տարածաշրջանային միջինից անհամեմատ բարձր է»: Ըստ ՀԲ-ի, այսօր Հայաստան աշխատուծի 18%-ը գործազուրկ է:

Հայաստանը Եւ ԼՂ-ն Ի զօրու Են պաշտպանել Ղարաբաղի անվտանգութիւնը

Հայաստանի հարաւ-արեւմուտքում տեղակայուած զօրամասերից մեկի հսկողութեան տակ գտնուող առաջնային սահմանագծում անցկացուած ասուլիսի ժամանակ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը Օհանեանը վերահաստատեց, որ Հայաստանի Հանրապետութիւնը հանդիսանում է Լեւոնային Ղարաբաղի անվտանգութեան երաշխաւորը, եւ Հայաստա-

նի Զինուած ուժերն ու Ղարաբաղի Պաշտպանութեան բանակը միասնաբար ի զօրու են պաշտպանել Ղարաբաղի անվտանգութիւնը: «ՀՀ Զինուած ուժերը եւ Արցախի Հանրապետութեան Զինուած ուժերը այսօր ի վիճակ ի են դիմազրաւել եւ դեռ աւելին՝ նախադրուած լինել այն ուժերին, որոնք կան մեր հարեւանների մօտ»:

Զբաղուածութեան Խնդիրը Շարունակում Է Ամենահրատապը Մնալ Սիրիահայերի Համար

Պատերազմի հետեւանքով Հայաստան եկած բազմաթիւ սիրիահայեր վստահ են, որ այլեւս ի վիճակի չեն լինի վերականգնել տարիների ընթացքում իրենց վաստակած կարողութիւնը:

Թէեւ երբեմն հանդիպում են անբարեհաջակ մերաբերմունքի: Ամէն դէպքում, Հայաստանում գտնուող գրեթէ բոլոր սիրիահայերին հանգիստ չի տալիս հետ՝ Սիրիա վերադառնալու միտքը:

Վարդան Նազարեանի ընտանիքը Հալէպում ունեցել է մեծ առանձնատուն, աւտոմեքենաներ, սեփական գործարան: Երբ Սիրիայում իրավիճակը սրուեց, Նազարեանները տեղափոխուեցին Լիբանան, ապա՝ Հայաստան: Վարդանն ասում է, որ պատմական հայրենիքին դժուար են յարմարում: Ամենահրատապը գբաղուածութեան խնդիրն է: Նախկին գործարանատէրն աշխատանք գտել է Երեւանում տաքսի է վարում:

«Ամէն ինչը հոն մնաց՝ գործատեղն ալ, տուներնիս ալ, աւտոն ալ, ամէն ինչը: Թէ կարելի կը դառնայ, ծախենք, հետ հոս կու գանք, չգիտեմ ինչպէս կ'ըլլայ», - նշեց սիրիահայ երիտասարդը:

«Ասում էին, որ հոստեղ աշխատանք չկայ, բայց կարծում եմ, որ ով փնտռում է, անպայման կը գտնի», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց Վարդան Նազարեանը:

Աշխատանքի եւ բնակարանի խնդիրը եւս շարունակում է խիստ հրատապ մնալ: Մեզ հետ զրոյցում մի սիրիահայ, ով չցանկացաւ ներկայանալ, նշեց, թէ այս առումով վերջին երկու տարուայ ընթացքում գրեթէ ոչինչ չի փոխուել՝ չնայած Հայաստանի պատկան մարմինների յայտարարութիւններին:

Այսօր Երեւանում սիրիահայերը ստանում էին հերթական օգնութիւնը: Այն տրամադրում է ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի գրասենեակը: Սիրիահայերի հիմնախնդիրները համակար-

ստացողներին: Նրանք փոխանցեցին, որ նախկինում ստանում էին ձէթ, մակարոնեղէն, բրինձ եւ ալիւր: Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոնի տնօրէն Լենա Հալաջեանի խօսքով կենտրոնում՝ որպէս օգնութեան կարիք ունեցող գրանցուած են մօտ 2000 սիրիահայ ընտանիքներ: Նրանց գրեթէ կեսը ապահովուած է աշխատանքով:

Save Support Sustain SYRIAN ARMENIAN RELIEF FUND P. O. Box 1948 Glendale, CA 91209-1948 www.syrianarmenianrelieffund.org

ՀԱՅԱՍՏԱՆ ՅԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՏԵՆԱՊԵՏ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՐՏԱՍԿԵՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ Ի ՊԱՏԻ ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՅ՝ ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆԻ



Նախորդ տարիներու ընդունելութեանց ականդական ձեւը փոխելով՝ Հայաստան Համահայկական Հիմնադրամի տեղույս վարչութեան նորընտիր նախագահ՝ Պրն. Անդրանիկ Պաղտասարեանն ու Տիկին Սօսի Պապեղեանը գեղեցիկ պարտիաներ յղացած էին շքեղ ընդունելութեամբ մը հովանաւորելու Հիմնադրամի սոյն ձեռնարկը պատուելու Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ՝ Բակո Սահակեանն ու Հիմնադրամի բարերարները, ինչպէս նաեւ հոգաբարձուներն ու համայնքի տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչները, թիւով մօտ 400 հոգի:


Ծանօթ հայրենի հանդիսավար Հրանդ Թօխաթեանի բացման խօսքէն ետք սեղաններու օրհնութիւնը կատարեց Գերշ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

ԱՄՆ-ի արեւմտեան շրջանի Հայաստան Համահայկական Հիմնադրամի նախագահ Անդրանիկ Պաղտասարեան ներկաները ողջունելէ ետք պարզեց Հիմնադրամի հայրենասնուէր առաքելութիւնը եւ կոչ ուղղեց լիաբուռն մասնակցիլ վարդենիս-Մարտակերտ նոր մայրուղիի կառուցման նուիրահաւաքի գործին:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ նաեւ հոգաբարձուներու Կեղրոնական Մարմնի անդամ Ալպէս Պոյաճեան եւ կարեւորութեամբ նշեց Արցախի վերակառուցման անհրա-

ժեշտութիւնը: Գոհաբանութեան օրուան համար նախատեսուած թելեթոնին ազդովին սատար հանդիսանալու կոչեր ուղղեցին Հայաստան Համահայկական Հիմնադրամի գործադիր տնօրէն Արա Վարդանեանն ու Լոս Անճելոսի Հայաստանի աւագ հիւպատոս Սերգէյ Սարգիսովը:

Իր ելոյթին մէջ Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան նախ շնորհակալութիւն յայտնեց ԱՄՆ-ի իշխանու-



թիւններուն երկրի բնակչութեան եւ յատկապէս հայութեան նկատմամբ ընձեռած հնարաւորութեանց համար: Ապա անդրադարձաւ վերջին տարիներու Ղարաբաղի մէջ ձեռք բերուած տնտեսական, մշա-

ԳԵՐՇ. ՊԱՐԳԵՒ ԱՐԲ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ ԲԱՐԵԼԱԴՈՒՄԸ



Անցեալ Շաբաթ, Նոյեմբերի 23ին, 2013 Լեոնային Ղարաբաղի առաջնորդ Գերշ. Ս. Պարգեւ Արք. Մարտիրոսեան արտի անհանգստութիւն մը ունենալով իսկոյն հիւանդանոց փոխադրուեցաւ եւ շտապ դիտարկումի բաժնի անմիջական քննութեան տակ առնուեցաւ: Սրտի մասնագէտ գոյգ հայ բժիշկներու լուրջ խնամքին ենթարկուելով Սրբազան հօր վիճակն այժմ բարելաւուած է եւ սրտի գործողութեան կարիքը չի գագցուիր:

Նշենք նաեւ, որ Պարգեւ Սրբազան Լոս Անճելոս ժամանած էր Հայաստան Համահայկական Հիմնադրամի հրաւերով, մասնակցելու համար Հինգշաբթի օրուայ հեռուստամարաթոնին:

Շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք Արցախի խիզախ առաջնորդին:

Մասնակցելով Հանդերձ Վիլնիւսի Գագաթի Ժողովին

Շարունակուած էջ 1-էն

սխալը Եւրոպացիներէն էր:

«Եւ բանակցութիւններ ընթացքում, եւ դրանից առաջ, եւ դրանից յետոյ երբեք ոեւէ մէկը չի բացառել, որ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ռազմավարական շարաբերութիւնները առաջնային են, կարեւոր են, եւ Հայաստանի համար միշտ ունեցել են գրաւչութիւն Մաքսային Միութիւնը եւ Եւրասիական Տնտեսական Միութիւնը», - յայտարարած է Ջաքարեան՝ պնդելով որ, եւրոպա-

ցիներու սխալն այն էր, որ անհամատեղելի կը նկատէին Մաքսային Միութիւնը եւ Եւրոպայի հետ ընկերակցութիւնը:

Խորհրդարանի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի նախագահի կարծիքով, եթէ Եւրամիութեան որոշ երկիրներ արեւելեան գործընկերութիւնը կը տեսնեն որպէս աշխարհաքաղաքական խնդիր եւ կը փորձեն այլ շահեր փնտռել այդ ձեւաչափին մէջ, ապա Հայաստանի համար ձեռնտու չէ գտնուիլ այդ գործընթացներուն մէջ:

Հայաստանի մէջ Աղքատութիւնը Նուազած է

Շարունակուած էջ 1-էն

չէին, որոնք մինչ այդ միջին խաւ էին, բայց վարուող տնտեսական քաղաքականութեան արդիւնքում են աղքատացել», - հարց կու տայ Վահագն Խաչատրեան, - «Դա կապուած չէ տնտեսական ճգնաժամի հետ, այլ պարզապէս այն քաղաքա-

կանութիւնն է, որ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը վերջին տարիներին է վարում, որի հիմնական նպատակն է փոքր եւ միջին բիզնէսը վերացնել, եւ դրա փոխարէն ունենալ իր կողմից կառավարուող օլիգարխիա եւ իր կողմից կառավարուող աղքատ խաւ»:

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 70-ԱՄԵԱԿԸ ՆՇՈՒԵՑԱԿ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՄԷՋ

Լիբանանի անկախութեան 70-ամեակը յատուկ հանդիսութիւններով նշուեցաւ թէ՛ մայրաքաղաք Պէյրութի եւ թէ՛ արտասահմանեան շատ մը քաղաքներուն մէջ: Շաբաթ, Նոյեմբերի 23, 2013, Լոս Անճելոսի Լիբանանի Հանրապետութեան աւագ հիւպատոս՝ Տէր եւ Տիկին Ճօնի Իպրահիմ, համեստ ընդունելութիւն մը կազմակերպած էին Հոլիվուտի «Ռուզվելթ» հիւրանոցին մէջ:

Ժողովրդային տարբեր իսաւորութեան ներկայացուցիչներուն մէջ կը նշմարուէին քաղաքական եւ կրօնական ականաւոր դէմքեր, գործարարներ ինչպէս նաեւ օտար դիւանագէտներ: Հայ գաղութի կողմէ

ներկայ էին տեղույս ականդական երեք կուսակցութիւններու եւ յարանուանութեանց ու տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Այս առթիւ խօսք առաւ Լիբանանի աւագ հիւպատոս Ճօնի Իպրահիմ եւ համառօտ կերպով ներկայացուց անկախութենէն սուրբին երկրէն ներս արձանագրուած յաջողութիւններն ու դիմագրուած դժուարութիւնները: Ան կոչ ուղղեց սատար հանդիսանալու Լիբանանի տնտեսական վերելքին ու բարգաւաճումին: «Բոլորս պէտք է գուրգուրանք մեր գեղաձիճաղ երկրին վրայ, որպէս զի ան մնայ ազատ, անկախ եւ գերիշխան» ըսաւ ան:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՏԱԿՆԵՐ 1060 North Allen Ave Pasadena, CA 91104 Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով Հետաքրքրուողներէն հեռաձայնել (626) 398-0506

«ՅՈ՞ՒՆԻՍԿՈՒՄ, ԶԱ՛Յ ԺՈՂՈՎՈՒՐԴ»

ՖԵԼԻՔՍԱՆՉԻՆՆԱՆ

Այս լուսաւոր 21-րդ դարում Հայաստանում մոլեգնում է ծեր ու զառամեալ մի չարիք՝ գաղափարների, կուսակցութիւնների պատերազմը: Թւում է, թէ բոլոր դէմ ենք այդ պատերազմին՝ Հայաստանում եւ Սփիւռքում, բայց ոչինչ չենք անում, եւ դա ներսիք քայքայում է մեզ, թուլացնում մեր վստահութիւնն ու ինքնավստահութիւնը: Պարզուրում է, որ պետութեան ձեռքերն էլ են թաթախուած այդ մեղքի մէջ, այն պետութեան, որը պիտի պայքարի բռնութեան, մարդկային իրաւունքների ոտնահարման դէմ, հաստատի գաղափարների եւ խօսքի ազատութիւն, այլապարծութիւն, հանդուրժողականութիւն: Ոչ թէ բռնութիւնը, այլ օրէնքը պիտի դառնայ պետութիւն կոչուող հզօր մեքենայի գլխաւոր շարժիչ անիւ: Խորհրդային բռնութիւնների պայմաններում մեծացած սերունդը, որն այժմ իշխանութեան ամենաբարձր պատուանդանին է, դիւրութեամբ չի կարող ազատուել այդ ախտից:

Պատերազմը, նոյնիսկ վաղուց աւարտուած պատերազմը, դեռ երկար է շարունակուում անգամ այն սերնդի կեանքում, ով չի տեսել այն, չի լսել պայթիւնների որոտը: Ծարունակում է, որովհետեւ այս խիտ բնակեցուած քաղաքակրթութեան բնօրրանում՝ Անդրկովկասում, պետութիւնները, իշխանութիւնները, ընչաքաղցութեան մոլուցքով տարուած աղքատ հոգիները թոյլ չեն տալիս որեւէ սերնդի մոռանալ պատերազմը, չլսել նրա որոտը: Պատերազմի չիչեցման «թերթիկը» թարմացում է ամէն նոր սերնդի համար: Այդ պատճառով էլ շարունակուում եւ խորանում են պատերազմի պայմաններում գործող օրէնքները. յաղթողը միշտ իրաւացի է, պատմութիւնը գրում է յաղթող կողմը, պատերազմում կարող ես սպանել անգամ իւրայինիդ: Ցաւալին, սակայն, այն է, որ երբ իսկական թշնամու դէմ աւարտում ենք մեր պատերազմը, պատերազմ ենք սկսում իւրայինի դէմ՝ անխնայ բաժանելու, տիրանալու, գրաւելու նրա ունեցածը, ոչնչացնելու նրան այնպէս, ինչպէս կուռի դաշտում՝ թշնամուն: Տեսի՞րք մըն էր այդ, թէ ճշգրիտ պատկեր...

«Մոխրապատ դաշտի մէջ անթիւ ոսկրեր» Կը բարձրանային՝ դարերով դիզուած Նզովքի բուրգի մը պէս՝ դէպ Աստուած: ...Բայց հազիւ վերստացան կեանքի շունչ: Այդ հազարդարեան ոսկրերն անշ-

շունջ //Սկսան իրար պատուել դժիւեմ, //Ամէնքն իրար հետ, գաւակը հօր դէմ... // Երբ քիչ վերջ բոլորն ալ ինկան արդէն. //Խոր հառաչանքով հծծեցին՝ «Մարդ են...» //Բայց մի ծերունի՝ իրենց վրայէն //Կոխտուեց, անցաւ ու լացաւ՝ «Հայ են...»:

Ինչի՞ նման են մեր ընտրութիւնները՝ բոլոր մակարդակների: Պատերազմ՝ իւրայինի դէմ, որտեղ յաղթում են կեղծիքն ու սուտը: Պատերազմում բոլորն են զոհեր, անգամ բռնութիւնն իրականացնողները, որովհետեւ նրանց կեանքն ու գործելակերպն էլ խոշոր հաշուով ինչ-որ բիրտ ուժի հետեւանք են: Ազատ չէ մարդը, ազատ չեն անգամ վախ ու սարսափ տարածող հզօրները, նրանք նոյնպէս երջանիկ չեն, նրանք բոլորն էլ մեծ դժբախտներ են, որոնց այդպիսին դարձնելով՝ կեանքը նրանց հետ վարուել է նոյնքան դաժան, որքան իրենք իրենց զոհերի հետ: Այսօր հայերը աշխարհով մէկ թափառում են ոչ թէ որպէս մշակոյթ ու քաղաքակրթութիւն տարածողներ, այլ որպէս էժան ու որակեալ աշխատուժ: Հայաստանն իր գաւակներին՝ մարդկային այդ անգին հարստութեանը, քամուն է տալիս, դռնեդուռ գցում, թոյլ տալիս, որ գնացող-եկողը կոխկրտի նրանց, նրանց արհամարհելով՝ արհամարհի իրենց երկիրը, ազգին, ժողովրդին: Սովորական, շարքային մարդիկ, եթէ անգամ յանցագործներ են, պակաս մեղաւոր են, քան այն պետութիւններն ու նրանց ղեկավարները, որտեղ ծաղկում են յանցագործութիւններն ու բռնութիւնները: Մարդը մենակ անզօր է անգամ յանցագործ դառնալ, ուր մնաց թէ կարողանա կանխել յանցանքը:

Աշխատելու մեկնած եւ ակամայից հասարակաց տներում յայտնուած հայ կանանց ճակատագիրը նոյնպէս մնում է հայ այրերի խղճին: Մարմնավաճառութիւնը ծաղկում է մի երկրում, որտեղ ընտանիքն ու կինը սրբութիւն են, եւ դա պակաս չարիք ու աղէտ չէ, քան պատերազմը: Բոլոր պատերազմներից ու աղէտներից ամենաշատը տուժում են ընտանիքը եւ երեխաները: Այդ մեղքի հատուցումն այսօրուայ հազարաւոր հիւանդ եւ խեղուած հայ մանուկներն են, անընտանիք ընտանիքները, իսկ աւելի սարսափելի հատուցումը՝ համասեռամոլութեան համաշխարհային յաղթարշաւը, որը սպառնում է մարդկութեան գոյութեանն առհասարակ: Դա պատե-

րազմ է մարդկութեան դէմ: Միշտ էլ աշխարհի ամենամեծ փողերը վատնուել են մարդկութեանը կործանող չարիքների վրայ՝ պատերազմ, թմրամոլութիւն, մարմնավաճառութիւն, զէնք, խմիչք, բայց հասարակութեան առողջացման մոլեկուլը միշտ էլ կենդանի է մնացել, այն իւրաքանչիւր մարդու, ընտանիքի ներսում է, հայրենիքի ու հայրենասիրութեան մէջ, շատ պարզ, հասարակ ու թանկ բաների մէջ: Յեղասպանութիւն տեսած ժողովուրդն իրաւունք չունի այսքան անփոյթ լինելու իր արժէքների պահպանման ու փոխանցման ազգային պարտքի հարցում: Աստուած մեզ ողջ է պահել 1915-ի արհաւիրքի այն օրերին, երբ մեր ողջ մնալը բացառուում էր թրքական դիւանագիտութեան եղերական ծրագրերի մէջ, եւ ժամանակի հեռաւորութիւնից անգամ մեր յարուստութիւնը թուում է անհնար: Աստուծոյ առաջ պարտք ունենք եւ հայ ու մարդ մնալով՝ պիտի հատուցենք մեր պարտքը:

Ի՞նչ էք անում, ո՞ւր էք գնում, ի՞մ թանկ ու սիրելի արիւնակիցներ, մտածենք Աստուծոյ պատժի մասին, եթէ մեզ համար չենք վախենում, վախենանք մեր երեխաների համար: Եւ չիչէք, պարտադիր չէ, որ Աստուած մեզնից լուծի իր վրէժը, մտածենք մեր անմեղ երեխաների մասին, թոյլ տանք նրանց մնալու անմեղ եւ նրանց ժառանգութիւն թողնենք ոչ թէ մեր մեղքերի ծանր բեռը, այլ հզօր հայրենիք ունենալու յոյսն ու հաւատը: Ի դէպ, երեխաները, հայ երեխաները... Պատկերացնո՞ւմ էք, այսօր Հայաստանում կան որք երեխաներ, որոնցից շատերի ծնողները ողջ են, խաղաղ Հայաստանում, երեխայապաշտ հայերի հայրենիքում... Նորից մտքիս էկրանին գծագրուեց նորվեզացի մեծ մարդասէրի կերպարը, Մեր Իմաստունի արքեպիսկոպիտ կերպարը:

1925-ի Յունիսին Ֆրիտյոֆ Նանսենը եկաւ Հայաստան, այցելեց Գիւմրու մանկատուն՝ Եղեռնից մազապուրծ հայ որբուկների տաքուկ ու ապահով բոցնը: Նրանց կեանքի պահպանման, նրանց հանդէպ սիրոյ ու զթասարտութեան վեհ գործին մեծագոյն սիրով ու հոգատարութեամբ նուիրուել էին օտարները՝ Մերձաւոր Արեւելքի նպաստամատուց կոմիտէի բարեպաշտ ու կարեկից միսիոներները: Նանսենը եղաւ ամառային ճամբարներից մէկում, ճաշակեց այն նոյն ապուրից, որ մատուցուեց երեխաներին: Իր յայտնի «Խաբուած ժողովուրդ» գրքում այդ օրուայ մասին նա գրեց. «Մենք տեսանք Մերձաւոր Արեւելքի նպաստամատուց կոմի-

տէի բոլոր հիմնարկները Լենինականում: Դրանց մէջ մտնում էին տասնմէկ հազար որբերի մանկատներն ու դպրոցները՝ հաւանաբար կազմելով աշխարհում ամենամեծ թիւը: Մեզ վրայ խոր տպաւորութիւն թողեց այն փառաւոր գործը, որ արուել էր եւ շարունակուում էր արուել, որպէսզի այդ երեխաներին մեծացնէին ու դարձնէին հասարակութեան պիտանի անդամներ: Յատկապէս պէտք է նշել, որ այդ հազարաւոր առողջ, երջանիկ եւ ուշիմ երեխաներին իրականում խլել էին մահուան ճիրաններից»:

Հետագայում այդ որբերից մէկը՝ Խաչիկ Դաշտենցը, իր «Փայտոն Ալեքը» պոէմում պիտի յիշէր. ...Քեզ եմ վերջիցում կարօտով մի պահ, // Հոյակապ, շքեղ, Մեծ Նորվեզացի: // Ինձ էլ վիճակուեց քեզ տեսնել մի օր, // Որբական կեանքիս դառնալու շէմին, // Դու վերջին անգամ եկար մեզ այցի // Ու մեռար՝ Երկրիս արեւը դէմքիդ: Այդ տղաներն այսօր արդէն չկան կամ ծերունագարդ ու դողդոջուն պապիկներ են: Ողջ են նրանց գաւակներն ու թոռները՝ աշխարհի բոլոր երկրներում եւ Հայաստանում: Ուզում եմ գոռալ՝ գուցէ անիմաստ, գուցէ անհասցէ, բայց լուել չեմ կարող: Մենք՝ օտարի գթածութիւնն այդքան խորապէս գագցող ու մեծագոյն երախտագիտութեամբ ու խոնարհումով գնահատող հայ այրերս, մի՞թէ չենք կարողանում այնպէս անել, որ այլեւս հայ որբեր եւ մանկատներ չլինեն Հայաստանում: Ես համոզուած եմ, որ մեր մէջ է ի կարող մեռած լինել բարեգութ մարդու, բարեգործ այրի ազնիւ գենը: Չէ՞ր կարող նաեւ այնպէս պատահել, որ մեր հոգեկերտուածքի մէջ սերտաճած լինէր մեր երեխաներին, հայ երեխաներին ընդմիշտ օտարի գթածութեանն ապաւինելու ամօթալի ստրկամտութիւնը: Դա ամենավատ բանն էր, որ կարող էր տեղի ունենալ երեխայապաշտ հայ մարդու հետ, եւ փառք Աստուծոյ, որ տեղի չի ունեցել: Գիւմրիում այսօր ապրում են հարիւրաւոր որբ հայ մանուկներ, մանկատներ կան Երեւանում, Գաւառում...

Այս տողերը գրելիս ոչ թէ ցաւ, այլ ամօթ ու խղճի խայթ եմ գգում: Եթէ մենք կարողանայինք, ո՛չ, եթէ մենք ցանկանայինք որդեգրել այդ երեխաներին, ընտանիք եւ մանկութիւն պարգեւել նրանց, աշխարհում այլեւս չէր լինի որբ հայ մանուկ... Դա ամենալաւ վրէժն է, որ ես կարող եմ լուծել Աթաթուրքից... Բայց կարո՞ղ եմ... Կոմիտասին առաջին

Շարք էջ 18

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

| | | |
|--|---|---|
| <p>6300 Wilshire Blvd, Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability | <p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning | <p>300 N. Lake Ave, Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B |
|--|---|---|









Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճեղաւ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

«ԵՍ ՅԱՅ ԵՄ, ԵՂԵԼ ԵՄ, ԿԱՍ ԵՒ ԿԸ ԼԻՆԵՄ ՅԱՅ...» (Արամ Խաչատուրեանի 110-ամեակը)

Հենրի Կ ԱՆԱՍԵԱՆ

Նախքան առիթ տուող բուն նիւթին անցնելը, ցանկանում եմ փոքր ինչ խօսել հայ ժողովրդի հանճար Արամ Խաչատուրեանի մասին:

Նրա ծննդեան 110-ամեակի կապակցութեամբ, ափիւռքում (հիմնականում նկատի ունեմ մեր համայնքը) շահարկուող նիւթի վերածուեց կոմպոզիտորի ազգային պատկանելութեան, նրա ոչ հայկական երաժշտութեան, աւելին՝ նրա ռուսական, կամ կովկասեան երաժշտութեան հենքի վրայ ստեղծուած գլուխ-գործոցների հարցը:

Այս թեման նոր չէ: Տարիներ շարունակ, նոյնիսկ տասնամեակներ ընթացքում, միշտ էլ խօսակցութեան առարկայ է եղել Արամ Խաչատուրեանի հայրենասիրութեան խնդիրը: Աւելի հեռուն գնալով, շատերն անգամ նրան որակել են որպէս ռուս կոմպոզիտոր:

Մեր յօդուածի վերնագիրը պատկանում է Խաչատուրեանի գրչին: Սրանից էլ աւելի խօսուն փափստ, որ նա հայ է: Նոյն՝ նրա նամակից վերցուած այդ տողերի շարունակութեան մէջ նա ասում է. «Իմ ստեղծագործութիւնը, իմ ամբողջ գործունէութիւնը ամէնից առաջ պատկանում է իմ հարազատ ժողովրդին եւ իմ հայրենիքին...»:

Ի սկզբանէ՝ Արամ Խաչատուրեանը հասկացել էր, գիտէր, որ ինչպէս Վիկտոր Հիւգոն է ասում՝ «Ինչպէս չի կարելի ապրել առանց հացի, այնպէս էլ անհնարին է ապրել առանց հայրենիքի»:

Արամ Խաչատուրեանի պարզան նոյնն էր, ինչպէս համաշխարհային համբաւի տէր բազում արուեստագէտների, որոնք ապրելով արտերկրում, չէին կորցնում ազգային պատկանելութիւնը եւ նրանց արուեստի հիմքում մշտապէս տիրապետող լինում էր իրենց ծննդավայրի բանն ու խօսքը, ազգային բանահիւտութիւնն ու արուեստը:

Այս իմաստով լաւ է ասել ֆրնասացի կոպոզիտոր Սէն Սանսը. «Եթէ արուեստը նոյնիսկ հայրենիք չունի, արուեստագէտներն այն ունեն»:

Այժմ գանք մեր բուն նիւթին: Լոս Անճելոսի դասական երաժշտութեան սիրահարները չորս անգամ համագաղութային տարողութեամբ վայելել են Արամ Խաչատուրեանի փառահեղ երաժշտութիւնը: Չորսն էլ նրա յոբելեանների առիթով:

Առաջինը՝ 1993 թուականին, կոմպոզիտորի ծննդեան 90-ամեակի կապակցութեամբ, մասնակցութեամբ Լոս Անճելոսի «Սիփան» երգչախումբի եւ սիմֆոնիկ նուագախումբի: Համերգի հովանաւորն է եղել Լոս Անճելոսի Հայ Արուեստի կեդրոնը եւ երջանկալիչատակ դոկտոր Յարութիւն Սաղրեանը, որ մեծ հաբաւ էր վայելում մեր համայնքում, որպէս դասական երաժշտութեան երկրպագու:

Երկրորդ յոբելեանական համերգը տեղի է ունեցել 1999 թուականին՝ կոմպոզիտորի ծննդեան 95-ամեակի առիթով, նախորդ համերգի՝ նոյն մասնակիցներով, որի հովանաւորն էր Լոս Անճելոսի Հանճար Հայրենակցական Միութիւնը՝ վաղամեռիկ հայրենասէր հայորդի,

«Ջանգու» հաստատութեան տնօրէն, «Սիփան» երգչախումբի լաւագոյն բարեկամ Մարտիրոս Իսկէնտէրեանը:

Երրորդ յոբելեանական համերգը, այս անգամ արդէն Արամ Խաչատուրեանի ծննդեան 100-ամեակի առիթով, տեղի ունեցաւ 2000 թուականին՝ բալետային արուեստի կարկառուն ներկայացուցիչ՝ Գրիգորովիչի բեմադրած «Սպարտակ» բալետի ռուսական պարախումբի կատարողութեամբ:

Եւ ահա, 2013 թուական: Հայաստանի կառավարութիւնը եւ Մշակույթի նախարարութիւնը որոշում են տարին նուիրել Արամ Խաչատուրեանի ծննդեան 110-ամեակի տօնակատարութեանը, եւ այդ կապակցութեամբ թէ՛ հայրենիքում եւ թէ՛ ափիւռքում կազմակերպել պատշաճ ծրագիր համերգներով նուիրուած այդ յոբելեանին:

Եւ, բնական է, ափիւռք ասելով առաջին հերթին նկատի է առնուած Սփիւռքի ամենաշատ հայահոծ համայնքը՝ Լոս Անճելոս գաւառը, իր տասնամեակներու քաղաքներով:

Լոս Անճելոսի Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսութիւնը հաղորդագրութիւն է հրատարակում Արամ Խաչատուրեանի ծննդեան 110-ամեակի առիթով իրականացուելիք միջոցառումների մասին, որի մէջ ի թիւս այլ մանր-մունր ձեռնարկների, նշում է (միանգամայն իրաւացիօրէն) Արամ Խաչատուրեանին հանրութեանը ներկայացնել նրա մեծածաւալ գործերով:

Ի հարկէ, գաղտնիք չէ, որ Խաչատուրեանը աշխարհին յայտնի է առաւելապէս սիմֆոնիկ, կոնցերտային, բալետային գործերով: Այդ ամէնը իրականացնելու համար նկատի է առնուած Լոս Անճելոսի ֆիլհարմոնիկ եւ սենեկային նուագախումբերը:

Սակայն անցնում են օրեր, ամիսներ, բայց համազգային, ժողովրդային առումով ոչ մի ձեռնարկ չի իրականացնում: Հիւպատոսութեան ամպագոռգոռ հաղորդագրութեան բովանդակութիւնը կեանքի չի կոչում: Հետագայում պարզուեց, որ այդ նուագախումբերը այս տարի իրենց համերգային ծրագրերում ոչ մի Խաչատուրեան էլ չունեն...

Երկու-երեք ամիս առաջ մենք գրել ենք այդ մասին, որից, ըստ երեւոյթի հետեւութիւն չեն արել հիւպատոսիցիները:

Դեռ ամիսներ առաջ յայտնի էր, որ Լոս Անճելոսում «Արամ Խաչատուրեան 110» փառատօնի եզրափակիչ ձեռնարկը իրականացնելու պատիւը տրուած է Հայաստանի պետական սենեկային նուագախումբին եւ սպասոււմ էր, որ Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր Հիւպատոսութիւնը ջանք չի խնայելու Հայաստանի Մշակույթի նախարարութեան հովանաւորութեամբ իրականացուելիք ձեռնարկը բարձր մակարդակով եւ խուռնեղամ բազմութեան առկայութեամբ իրականացնելու համար:

Սակայն, դժբախտաբար, Հիւպատոսութիւնը ոչնչով չ'օգնեց ու չքաջալերեց համերգի կազմակերպչական մարմինն՝ գէթ նախապէս խոստացուած ու չիրականացրած ձեռնարկների մեղքը քաւելու համար:

Բայց, ինչպէս ասում են՝ ար-

դարութիւնը յապաղում է, բայց չի մեռնում:

Պէտք էր ներկայ լինել Հայաստանի Կամերային նուագախումբի փայլուն համերգին ու բաւարար չափով հանդիսականներին ներկայութեանը, որպէսզի համերգին ու բաւարար չափով հանդիսականներին ներկայութեանը, որպէսզի ներկայ չեղողները կարողանային հասկանալ թէ ինչ մեծ հաճոյքից են զրկուել:

Ընդամէնը՝ երկու-երեք յայտարարութիւն, տառապալից աշխատանք, որի արդիւնքում՝ սրահը գրեթէ լիքն էր հանդիսականներով: Չգիտեմ թէ ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, յստակ չկամութիւն կար որոշ անձանց եւ միութիւնների կողմից այդ համերգի իրականացման ճանապարհին: Սրահում բացակայում էին մարդիկ, միութեանականներ, որոնց պարտքն էր քաջալերել ձեռնարկը:

Անուհանդերձ քիչ չեն դասական երաժշտութեան, ի մասնաւորի Խաչատուրեանի երաժշտութեան սիրահարները:

Այժմ մի քանի խօսք նուագախումբի եւ համերգի ծրագրի մասին:

Հայաստանի կամերային նուագախումբը ստեղծուել է 1962ին՝ մի խումբ երաժիշտ-կատարողների հայրենասիրական ոգու շնորհիւ եւ հասարակութեան առջեւ սեփական շնորհքը ցուցադրելու համար: 1966ին, չորս տարի գոյատեւելուց յետոյ, տաղանդաւոր երաժիշտ Ջարեհ Սահակեանցը կարողանում է պետական կարգավիճակ ապահովել նուագախումբի համար: Վաղամեռիկ Սահակեանցին փոխարինելու է գալիս տաղանդաւոր ջութակահար Կոնստանդին Պաղտասարեանը: Այնուհետեւ նուագախումբի խմբավարի հարթակին է կանգնում Ռուբէն Ահարոնեանը: Վերջինիս փոխարինում է Արամ Ղարաբէկեանը, որն աւելի քան տարի տարի անխափան

ղեկավարում է խումբը:

Ներկայիս Հայաստանի պետական կամերային նուագախումբի ղեկավարն է դաշնակահար եւ դիրժոր՝ Վահան Մարտիրոսեանը:

Համերգի առաջին բաժնում կատարուեցին երկու ռոմանտիկ կոմպոզիտորներ՝ Մոցարտի եւ Չայկովսկու գործերը: Եթէ ուզում ես հոգեպէս հանգստանալ, ապա մտիկ արա Մոցարտի մեղմ երաժշտութիւնը, ընկիր բազկաթուր մէջ ու երագիր, մանաւանդ Հայաստանի նուագախումբի մեղմից էլ մեղմ հնչիւնների տակ:

Չայկովսկու չափազանց յայտնի Սերենադը՝ սիմֆոնիա լինի կարծես: Դասական սիմֆոնիայի սկզբունքներով յօրինուած այդ ստեղծագործութեան երկրորդ մասը՝ Վալսը, խնդումբերս երիտասարդների պալատական պաշտօնական պարի հրաւէր լինի կարծես: Այդ Վալսը բազմաթիւ մշակումներ ունի, թէեւ այն գրուած է լարային քառեակի համար:

Մեզ ամէնից շատ հետաքրքրող համերգի երկրորդ բաժինն էր:

Կոմիտաս-Աւլամագեանի մանրանուագները, վստահ, եմ, ամէն քիչ թէ շատ դասական, ազնիւ երաժշտութիւն սիրող անհատ անգիր գիտի դրանք եւ բազում անգամներ լսել է տասնեակներով լարային քառեակների կատարմամբ:

Բայց ուրիշ համ ու հոտ կար Վահան Մարտիրոսեանի ղեկավարած նուագախումբի կատարման մէջ: Նախ՝ ինքը բոլոր հինգ մանրանուագները (Ալ ալլուդա, Քելէ-քելէ, Երկինքն ամպել ա, Կաքաւիկ, Վաղարշապատ) միացրել էր իրար՝ միանգամայն տրամաբանական անցումներով, եւ, որ պակաս կարեւոր չէ, այդ մանրանուագների մէջ գտել էր նոր գոյներ, նոր հնարաններ: Այդ իմաստով էլ՝ կար-

Շարք էջ 18

A SPECIAL EVENT AT THE UNIVERSITY CLUB OF PASADENA

You Are Cordially Invited to Attend a Unique Presentation & Discussion

Featuring
DORIS MELKONIAN
ARDA MELKONIAN
ANOUSH SUNI

Moderator
PROF. OSHEEN KESHISHIAN

Monday, December 2, 2013
7:00 pm Presentation

THE ARMENIAN ASSEMBLY OF AMERICA

Armenian Assembly of America
450 N. Brand Blvd. Suite 600
Glendale, CA 91203

University Club of Pasadena
175 N. Oakland Ave.
Pasadena, CA 91101
626.793-5157

ԱՆԿԱՇԿԱՆԴՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ընդհանրապես երբ չեն շտապում հանրակառուցում եմ երթեւեկում՝ վերջերս նաև հեծանիւով, որոնք իրենց օգուտներն ունեն։ Այս ընթացիկ տարուայ նույնըբերեան հինգաբարթին տաք օր էր, թերեւս ոչ լոս անջեղեցին չհաւատայ այս ամսում՝ որ շատ-շատ տեղերում անձրեւ, ձիւն, հողմ ու փոթորիկ եւ սառնամանիք է անում, իսկ Լոս Անջելեսում՝ տաք օրեր, քանի որ՝ արեւային քաղաք է տաք կլիմայով։

Հանրակառուցի վարիչը տղամարդ էր՝ յատուկ խաւի մարդկանց պճնուած կերպարանքով, ականջներ ըլծակները քաշուած՝ մէջտեղում օղակ դրուած, մագերը տարօրինակ յարդարանքով, ձեռքերը եւ ոտքերը դաջուած, խոշոր կազմուածքով մէկն էր՝ աչալուրջ նստուածքով։ Ազատութեան երկիր, ով ինչպէս ցանկանում է՝ հագնուի, ով էլ ինչ ցանկանում է՝ սաի, ազատութիւնը չարաչառուած սանձարձակութիւն։ Նա չէր փախցնում որեւէ մի կանգառ, կա՛մ յաճախորդ՝ ճամբորդ էր իջեցնում կա՛մ նստեցնում։ Կանգառներից մէկում մի քանի հոգիներ ներս մտան, նրանք պոչ-պոչի իրար ետեւից տեղաւորուեցին, նրանցից մէկն իմ աչքին երեւաց միջին տարիքը թեւակոխած մի կին, որը գուսպ հագնուած ամերիկեան ջինսի տափատով, նորմալ կազմուածքով միջահասակ, կլոր եւ մանրիկ աչքերով համակրելի դէմք, ոչ շարուած ու քսուած, բնական պարզութեան մէջ գեղեցկութիւնն էր խօսում։ Նա տեղ գրաւեց երեք հոգանոց աթոռի վրայ հայեացքը դէպի դիմացի աթոռները, որին մօտիկ նստած էի ես։ Չեմ իմանում ինչո՞ւ մերթ ընդ մերթ հայեացքս նրա վրայ էի ուղղում, եթէ չսխալուեմ, նրա ազգութիւնն էի ուզում ճշտել, հայի էր նմանում, բայց կասկածում էի, քանի որ նստելուց անմիջապէս լետոյ կողքի տղամարդի հետ լաւ անգլերէնով խօսել սկսեց։ Այդ տղամարդին յաճախ եմ տեսնում հանրակառուցի մէջ, երկարահասակ ծերուկ ամերիկացի, համարձակ, աւելի ճիշտ յանդուգն, երբեմն տարօրինակ վարքեր է ցոյց տալիս՝ հանրակառուցի մէջ՝ մարգանք է անում, վարիչի մօտ կանգնելով երկար-բարակ գրոց է անում մինչեւ իջնելը, կարծես թէ իր սեփական մեքենան լինի։ Կնոջ խօսակցութիւնը լաւապէս լսում էի, եթէ բարձր ձայնով խանգարիչ չլինէր։ Նրանց միջեւ առողջապահական հարցեր էին շօշափուում, նրանք համաձայնուեցին, որ կալսիոնի օգտագործումը տարեցներին համար օգտակար է բժշկի խորհրդով։ Բժշկական տեղեկութիւններից լետոյ անցան օդի մասին գանգատուելով. -վայ դրսում ինչ տաք է անում այսօր։ Նրանց երկուսի միջեւ ջերմ խօսակցութիւն էր գնում, երբեմն մեղմ խնդրեցներով։ Խօսակ-

ցութեան շարունակութեան ընթացքում յստակ լսեցի, որ կինը ասաց.

- Հայ եմ, ամուսնացած երեխայ եւ թոռնիկ ունեմ։

Կնոջ խօսքից մի տեսակ բաւարարութիւն ստացայ, որ հայութիւնը արժեւորել էր պարկեշտ հանդիպում եւ խօսակցութիւն ունենալով։ Հանրակառուցը կանգնեց եւ նոր մարդիկ վեր բարձրացան, մէկը նրանցից երկարահասակ մի ծերուկ քայլելիս ընկնելու վրայ էր, երբ այդ հայ կինը տեղից վեր թռաւ, այդ ծերուկի ձեռքը բռնելով օգնեց եւ իր կողքին նստեցրեց։ Այդ արարքը ոչ թէ միայն իմ կողմից գոհունակութեան արժանացաւ, վստահ նաև՝ շուրջի մարդկանց։ Էլ չհամբերեցի որպէս գնահատանքի արտայայտութիւն ասացի.

-Ես հաւանեցի ձեր այս վարքագիծը եւ անկաշկանդ յարաբերութիւնը մարդկանց հետ, որը ջերմացնում է սրտերը, փոխ յարգանք է առաջացնում եւ ճանաչողութեան հորիզոնը ընդլայնում է։

Նա առանց յապաղելու պատասխանեց.

- Հայ կանանց շատերի բնաւորութիւնը չեմ հաւանում, նրանք մարդկանց մէջ գտնուելով վախենում են գրուցել, չիսական արձանի պէս նստում են իրենք իրենց մէջ ամփոփուած մութ հայեացքով, ոչ թէ միայն օտարի մօտ, որ ասեմք լեզու չգիտեն, նոյնիսկ հայի մօտ նոյնը։

Իրաւացի էր նա, լուրջութիւնը լաւ է, նայեած ինչ պարագային, բայց ոչ արձանի պէս լինել։ Յարաբերուելը, շփուելը օգնում է մարդկանց ճանաչել, դարձնում է համարձակ, կարելի է ասել, նաև զարգացման մէկ կարեւոր միջոց է։

Այդ հայ կինը աթոռի վրայ մնաց մենակ, կանխ չզրաձառ լուրեաց, այլ գրուցել սկսեց կողքին կպած աթոռի մեքիկացի կնոջ հետ ասելով.

- Ես բացի անգլերէն լեզուից նաև գերմաներէն, պարսկերէն եւ հայերէն թէ՛ խօսում եւ թէ՛ գրում եմ, սակայն դեռ անգլերէն իմացութիւնիցս գոհ չեմ եւ վերդիկոյի քոլէջը դասի եմ գնում, գերմաներէնը սովորել եմ գերմանացում՝ քսան տարի այնտեղ ապրելով։

Նրանք խօսակցութեամբ էին զբաղուած, երբ հանրակառուցը կանգառում կանգնեց, հայ կինը շուրջը նայեց, տեսաւ քոլէջի կանգառն է, անմիջապէս իջաւ։ Այդ միջոցին երիտասարդ ուսանողների բազմութիւն շրթային նման ներս մտաւ, շատեր յոտնկայս ուրիշներ էլ դուրսը մնացին տեղ չլինելու պատճառով։ Ես կարծում էի միայն թեհրանում եւ Երեւանում են հանրակառուցը լեփ-լեցուն նստեցնում ինչպէս գրքի էջեր իրար կպած, մի՛ սաի, այստեղ էլ է պատահում։

Ուրբաթ, Նոյ. 8, 2013ը պիտի մնայ չիշատակելի օր մը, ՀԲԸՄ Իրութեան Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարանի աշակերտներուն մտքին մէջ: Աշակերտական Խորհուրդը կազմակերպած էր երեկոյ մը ի նպաստ Հայաստան Համահայկական Հիմնադրամին: Սրահը տօնական էր, բազկերակը Հայկական, ուր Հայաստանի եւ Արցախի դրօշակները կը ծածանէին գոհունակութեամբ լեցնելով հիւրերու եւ ծնողներու սիրտերը: Վարժարանի տնօրէնուհի Դոկտ. Թալին Քարկոտորեան կատարեց սրտի խօսքը, որուն մէջ ան նախ ողջունեց անգուգական բարերարներ Վաչէ եւ Թամար Մանուկեաններու, հոգաբարձութեան ատենապետ Պրն. Սինան Սինանեանի եւ Հայաստան Համահայկական Հիմնադրամի ԱՄՆ-ի արեւմտեան ափի նախագահ Անդրանիկ Պաղտասարեանի եւ այլ պատուոյ հիւրերու ներկայութիւնը, ապա շնորհակալութիւն յայտնեց Աշակերտական Խորհուրդին, Մտղաց Օժանդակ Մարմին, յայտագիրը պատրաստող ուսուցիչներուն եւ յայտագրի ընդհանուր պատասխանատու Օրդ. Լորա Գուլումեանին: Հանդիսութեան բացումը կատարեցին Աշակերտական Խորհուրդի նախագահուհի Դալար Պոյաճեան եւ փոխ-նախագահուհի Ժազլին Փօսթաճեան: Անոնք բացատրեցին օրուան նպատակը եւ

կարեւորութիւնը: Տեղի ունեցաւ աշակերտական յայտագիր մը, պատրաստուած՝ վարժարանի գեղարուեստական ընտրովի դասարաններուն կողմէ: Ասմունքով ելոյթ ունեցաւ էլիզապէթ Յոլաքեանը, որ արտասանեց Ս. Կապուտիկեանի «Խօսք իմ Որդուն» բանաստեղծութիւնը: Երգախումբը, խմբավարութեամբ Պրն. Պարթեւ Կիւլիւմեանի, կատարեց «Կենաց Երգ», «Կուռնկներ» եւ «Էջմիածին» երգերը: Լոռի Խորխոր եւ Լինա Ամիրեան հրամցուցին «Քեյ, Քեյ» երգին շուրջ հիւսուած արդիական պար մը: Մայքըլ Լուսինեան ներկաները գուարճացուց իր ձեռնածութեամբ: «Հայ Թատրոն» ընտրովի դասարանի դերակատարները ներկայացուցին երեք պատկերներ. «Դպրոցական Տեսարան Մը»՝ աշակերտներու հեղինակութեամբ, Լեռ Կամսարի «Ինչպէս Գերի Ինկայ»ն եւ գուարճալի պատկեր մը Թումանեանի «Անուշ»ի հետեւողութեամբ, դերուստից՝ Օրդ. Լորա Գուլումեան: Յայտագրի գեղարուեստական բաժինը փակուեցաւ հայկական աւանդական պարով, պարուստից՝ Տիկ. Հեյլէն Զօհրապեանց: Ընթրիքի սպասարկութիւնէն ետք, հիմնադրամի նախագահ Պրն. Մար.ք էջ 19

ՊԱՐՈՆ ՅԱԿՈՐ ՅԱԿՈՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Դոկտ. Սիլվա Գարայեան, Փոխ-Ատենապետ Վարժարանիս Հոգաբարձութեան,

Օրուայ մեծարեալ Տիկին Արփի Արսլանեան,

Յարգելի հիւրեր, ծնողներ, պաշտօնակիցներ եւ սիրելի աշակերտներ,

Ընդունուած ճշմարտութիւն մըն է՝ որ իր ականաւոր դէմքերը եւ մշակոյթի տաղանդաւոր ներկայացուցիչները ճանչնալը եւ զնահատելը՝ ազգի մը կարեւորագոյն յատկանիշներն են մէկն է:

Այս մտածումով՝ մեր դպրոցին մէջ կայացած Հայ Մշակոյթի ամսուան նուիրուած այս տարուայ հանդիսութիւններուն վեր առնուեցան Յովհաննէս Թումանեանի եւ Արամ Խաչատրեանի վաստակները, զրական եւ երաժշտական մարզերուն մէջ:

Անցեալ Ուրբաթ օր, մեր նախակրթարանի աշակերտութեան ներկայացուցած ճոխ յայտագիրը եւ այս երեկոյեան Միջնակարգ - Երկրորդական Բաժնի ելոյթները, առաջնորդութեամբ մեր վարժարանի Հայկական Բաժանմունքի նուիրեալ կազմին՝ վայել կերպով յարգանք մատուցին արդի ժամանակներու հայ մշակոյթի երկու երախտաւորներու ստեղծագործութիւններուն եւ մեզի ձգած ժառանգութեան: Շնորհակալութիւն, Հայկական Բաժանմունքի յարգելի պաշտօնակիցներ, զոյգ հանդիսութիւններու պատրաստութեան եւ գործադրութեան, ինչպէս նաեւ ձեր բոլորանուէր աշխատանքին եւ տրամադրած ժամանակին համար: Գնահատանքի ջերմ խօսք ունինք նաեւ յայտագիրներու մասնակից՝ մեր սիրելի աշակերտ-աշակերտուհիներուն:

Մեր հարուստ մշակոյթին նուիրուած այս հանդիսութիւնը աւելիով կ'իմաստաւորուի այս երեկոյ, որովհետեւ առիթ կ'ընծայուի նաեւ զնահատելու եւ մանաւանդ երախտագիտական մեր զգացումները յայտնելու երկարամեայ պաշտօնակիցի մը, Տիկին Արփի Արսլանեանին, որ որպէս հայերէն լեզուի, պատմութեան եւ կրօնքի դասատու, 25 տարիներ ամբողջ ծառայեց մեր աշակերտութեան մայրենի լեզուի իւրացման եւ հոգեմտաւոր զարգացման էական նպատակներու իրականացման:

Այս պահուն, ինծի վիճակուած է հաճելի պարտականութիւնը՝ խօսնակը ըլլալու Մանուկեան-Տեմիրճեան Վարժարանի մեծ ընտանիքին, արտայայտուելու Արփի Արսլանեանի ուսուցչական եւ դաստիարակչական քառորդ դարու ծառայութեան եւ արդիւնաւէտ աշխատանքին մասին:

Արփի Արսլանեան ծնած է Սուրիոյ Հալէպ քաղաքը, Տէր Զարմայր քահանայ եւ Երէցկին Մարի Հինտոյեաններու քրիստոնէական եւ ազգային շունչով ստեղծուած յարկին տակ:

Նախնական ուսումը կը ստանայ՝ Կիլիկեան Վարժարանի, իսկ երկրորդականը՝ Aleppo College-ի մէջ: Կ'ամուսնանայ Գրիգոր Արսլանեանի հետ եւ կը բախտաւորուին երկու զաւակներով, Յակոբ եւ Նելլի, երկուքն ալ հետագային շրջանաւարտներ մեր վարժարանէն:

ՄԵՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐԺԷՔՆԵՐԸ ՋՈՒԹԱԿԱՅԱՐՈՒՅԻ ԱՆԻ ԲԱՏԻԿԵԱՆ

Ա. Կ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Երաժշտութեան բնագաւառում կարելի է չիշել բազմաթիւ հայ արուեստագէտների անուններ, որոնք իրենց կատարողական արուեստով արժանացել են երաժշտասէր հասարակութեան եւ բժախնդիր քննադատների բարձր գնահատանքին, միջազգային երաժշտական շրջանակներում:

Այդ արուեստագէտների շարքին է պատկանում երտասարգ Չուլթակահարուհի Անի Բատիկեանը:

Անին ծնուել է Երեւանում: Քսան տարեկանում, գերազանց աւարտել է Երեւանի Պետական երաժշտանոցի սապիրանտուրան: 2003-2005ին, Ռաֆֆի Մանուկեան Հիմնադրամի նիւթական օժանդակութեամբ՝ սովորել է Լոնդոնի Արքայական երաժշտական Ակադեմիայում, որի դասընթացն աւարտել է գերազանց եւ ստացել՝ Ակադեմիայի Չուլթակի առաջին մրցանակը: Անին հետագայում իտալիայում աշակերտել է նաեւ Salvatore Accordo-ի:

Հայ Չուլթակահարուհին արժանացել է ազգային եւ միջազգային մրցանակների: Նա նուազահանդէսներ է տուել Մեծն Բրիտանիայի բազմաթիւ անուանի բեմերից, ինչպիսիք են՝ Էդինբուրգի Usher Hall, Օքսֆորդի՝ Sheldonian Theatre, Լոնդոնի՝ St Martin-in-Fields համերգասրահները:

Անին որպէս մենակատար՝ նուազել է մի շարք անուանի նուագախմբերի հետ, որոնցից յիշենք՝ "The Katrineholm Symphony Orchestra of Sweden", "The Glasgow Chamber Orchestra" եւ այլն:

Անի Բատիկեան 2007-2012 տարիներին աշխատել է Շոտլանդիայի երաժշտութեան եւ Դրամայի Արքայական Ակադեմիայում, որպէս Չուլթակի դասախօս:

EBRD (European Bank for Reconstruction & Development) դրամատան հովանաւորութեամբ, Նոյեմբեր 14ին, Անի Բատիկեանի վերջին նուագահանդէսը տեղի ունեցաւ, նոյն դրամատան Լոնդոնի համերգասրահում, դաշնամուրի ընկերակցութեամբ՝ Roland Roberts-ի:

Roland Roberts երաժշտական շրջանակներին ծանօթ է որպէս Չուլթակահար, դաշնակահար, խմբավար եւ երաժշտահան (composer):

Նա Լոնդոնի Արքայական երաժշտական Ակադեմիան աւարտելուց յետոյ՝ մասնագիտական ուսումը շարունակել է Միացեալ Նահանգներում:

Roland Roberts որպէս Չուլթակահար եւ դաշնակահար բազմաթիւ նուագահանդէսներ է տուել տարբեր



երկրներում, տարբեր նուագախմբերի հետ:

Իր Նոյեմբեր 14-ի նուագահանդէսով, Անի Բատիկեան արժանացաւ Լոնդոնի երաժշտասէր հասարակութեան բարձր գնահատանքին եւ հիացմունքին: Երիտասարդ Չուլթակահարուհին մեծ վարպետութեամբ ու ապրումով կատարեց Mozart-ի, Dvořak-ի, Արամ խաչատուրեանի, Bartok-ի, Բաղդասարեանի եւ Pablo de Sarasate-ի գործերը: Նրան յաջողուեց թափանցել իր կատարած ստեղծագործութիւններին խորքը, ապրել նրանց մէջ խտացած իւրաքանչիւր հնչիւնի, իւրաքանչիւր երաժշտական երանգի հմայքը եւ հրաշալի մեկնաբանութեամբ այդ ապրումները փոխանցել ունկնդիրներին, իւրայատուկ եւ սքանչելի ոճով. ոճ՝ որը նրա բացառիկ տաղանդի արգասիքն է:

Շնորհաւորում ենք մեծատաղանդ հայ արուեստագիտուհին այս առթիւ եւ մաղթում նրան՝ նորանոր յաջողութիւններ հետագայում:

Ստորեւ տալիս ենք մի քանի մասնագէտների կարծիքը Անիի մասին. "Ani controls the violin with very strong technique, possesses a very beautiful tone and expresses her music with very good sense of style and personal sensitivity." Pierre Amoyal, Concert Violinist

"Ani embodies a rare combination of scholar and performer, both at the highest level." Curtis Price, Principal of the Royal Academy of Music, London

"Player of great stature and powerful personality... A real performer of the highest level". David Strange, Head of string Department Royal Academy of Music, London

"...a wonderful violinist despite her youth." Michael Tumelty, The Herald

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԲ ՍՈՊՐԱՆՕ ՍՕՍԻ ՄԱՐԴԻՐՈՍԵԱՆԻ ԵՒ ԴԱՇՆԱԿԱՅԱՐ ԱԼԲԵՐՏ ԲՈՒԼԲՈՒԼԵԱՆԻ ԵՐԿՈՒ ԶԱՅՆԱՍԿԱԲԱՌԱԿՆԵՐԻ ՈՒ ՏԵՍԱԵՐԻՉԻ ՇՆՈՐՀԱՆԴԵԱԸ

Հոկտեմբերի 29-ին Հոլիվուտի Ֆրանկլին եւ Բրոնտոնի անկիւնում գտնուող «Սելեբրիթի Սենթրում» տեղի ունեցաւ «Էլիթ Յուլիվերսալ Ինովա Էնթրթեյնմենթ Փրոդաքշըն» ընկերութեան կազմակերպած սուպրանօ Սօսի Մարդիրոսեանի եւ երգահան ու դաշնակահար Ալբերտ Բուլբուլեանի հեղինակած երկու ձայնակալառակների ու տեսաերիզի տպաւորիչ շնորհանդէսը: Երեկոյին ներկայ էր նաեւ «Աշխարհի Երիտասարդները Մարդու Իրաւունքների Համար» կազմակերպութեան հիմնադիր Մարի Շաթլըվորդը:

Ժամը 17:30-ից - 19:30 ընթացաւ ալբոմի ստորագրութիւնը, հեղինակների եւ հիւրերի լուսանկարահանումները, ըմպելիքներ, այնուհետեւ ծրագրի համերգային ներկայացումները՝ 19:30 մինչ 21:30:

Հանդիսավար Սեդա Քվըրեան-Յայրիեանը եւ ՄԱԿ-ի գեղարվեստի միջազգային դեսպան Պենելոպ Լադրոն Դե Գելարան ներկայացրեցին սուպրանօ Սօսի Մարդիրոսեանի եւ դաշնակահար Ալբերտ Բուլբուլեանի երգերի ստեղծման աշխատանքն ու ընթացքը:

Վաստակաշատ Չուլթակահար Օֆելիա Նանագուլեանը նուագեց Կոմիտասի «Կուռնկ» եւ «Ծիրանի Ծառ» ստեղծագործութիւնները: Հանրաճանաչ ասումնքող Լաուրա Դաւթեանը, կարգապահ մի հատուած Պարոյր Սեւակի «Անլուրի զանգակատուն» պոէմից: «Աշխարհի Երիտասարդները Մարդու Իրաւունքների Համար» կազմակերպութեան նախագահ ու հիմնադիր Մարի Շաթլըվորդն իր ելույթում նշեց, որ «Յաղթութիւնն» իր իմաստով աջակցութիւն է Աշխարհում մարդու իրաւունքների ու ազատութիւնների համար:

Այնուհետեւ Արգենտինեան տանգոյ գեղեցիկ կատարմամբ երեկոն շարունակեցին հանրապատ պարող, դերասան եւ պարամարզիչ հայազգի՝ Սերջիօ Թոմմասն ու Լատինական պարերի պարուհի Աննա Պետրովան: Հանրապատ երգահան ու դաշնակահար Ալբերտ Բուլբուլեանը հանդէս եկաւ իր Նոքթիւրն դաշնամուրի համար ստեղծագործութեան հիանալի կատարմամբ, որը նա ժամանակին նուիր-

րաբերել էր հանրաճանաչ երաժիշտ Յանիին: Այս երեկոյի ընթացքում ստեղծագործութիւնները հնչեցին հեղինակի՝ Ալբերտ Բուլբուլեանի կատարմամբ:

Չուլթակի գեղեցիկ կատարմամբ Ռազմիկ Մարդիրոսեանը նուագեց Վիվալդիի Չորս Եղանակներից, «Ձմեռը» ստեղծագործութեան մէկ բաժին:

Արտուր Ասատրեանի «Իմէջ Պարարուեստի Կենտրոն»-ի սան Աննա Բաբլոյեանը պարեց «Ծաղկած Բալենի»-ից մի հատուած:

Սօսի Մարդիրոսեանի կատարմամբ հնչեցին հետեւեալ երգերը՝ «Արանյուեզ» երգը երեք լեզուներով՝ սպաներէն, անգլերէն եւ ֆրանսերէն, «Յաղթութիւն» երգը, նուիրուած Աշխարհում մարդու ազատութեան գաղափարն ու Մարդու իրաւունքների կազմակերպութիւնների աջակցմանը, երաժշտութեան հեղինակ Ալբերտ Բուլբուլեան, խօսքերի հեղինակ Սօսի Մարդիրոսեան, որից յետոյ նա երգեց Մարտիկի երգը հայերէն ու անգլերէն լեզուներով:

Հանդիսավար Սեդա Քվըրեան-Յայրիեանը պատմեց Վարդապետ Կոմիտասի, որպէս երաժիշտ-երագահանի միզազգային ճանաչման մասին:

Երեկոն եզրափակուեց Աշխարհում մարդկային տանջանքներին ու Յեղասպանութիւններին նուիրուած, «Ռեքվիեմ բոլոր Յեղասպանութիւններին» տեսաերիզի ցուցադրութեամբ, որտեղ Սօսի Մարդիրոսեանի կատարմամբ հնչեց Կոմիտասի «Տէր Ողորմիա»-ն հայերէն ու անգլերէն լեզուներով, ի պաշտպանութիւն Համայն մարդկութեան իրաւունքների:

Նշեմ, որ Աստուածատուր տաղանդով օժտուած Սօսի Մարդիրոսեանը, նաեւ ոսկէ մետալակիր է Գալիֆոռնիայի Պրայանք քաղաքում 2005թ. եւ 2007թ. Օգոստոսին տեղի ունեցած Կատարողական արուեստի Համաշխարհային մրցոյթի:

Հանդիսատեսի ծափերից ու հիացմունքի խօսքերից ելնելով ու ամփոփելով, կարելի է ասել, որ կայացաւ մշակոյթի ու արուեստի եւս մէկ հիանալի երեկոյ, որտեղից բոլորը հեռացան ջերմ ու լիշարժան տպաւորութիւններով:

ՆՈՐ ԳԻՐՔ

Խ մ բ ա գ ը ո լ թ ի լ ն ս շնորհակալութեամբ ստացաւ Նոր Օրերու Ֆետայիներ Լիբանանի «Մեր Տղաքը» ստորածաւալ, գեղատիպ կազմով գիրքը, բաղկացած 476 էջերէ, հեղինակութեամբ Մարտիկ Մատնանեանի: Ջերմ մաղթանքներով նորանոր յաջողութիւններ եւ գիրքերու հրատարակում:

«Մասիս»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 100,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:----- Fax: -----

ՀԱՅԵՐԷՆԻ ԽԱՆՑ(ՈՒ)ՈՂ ԱԿԱՆՁ

ԱԼԵԿՍԱՆԴՐԹՈՓՉԵԱՆ (Շարունակում և նախորդ էջի վրա)

Կատարուել է նաև իմաստներ-
րի ծանրաբեռնում մէկ բառի վրայ,
այլ խօսքով, գործածական բառա-
րանի աղքատացում: Իլլի էլ Պետ-
րովի հերոսուհի էլոչկան ընդամէ-
նը երեսուն բառ գիտէր, եւ այդքա-
նը լիովին բաւարարում էր նրան
հաղորդակցելու համար: Մեր լե-
զուն այսօր անշեղորէն ընթանում է
այդ ուղիով: Այլեւս չեն ասում
«համերգ», «ներկայացում»,
«ֆիլմ»: Դրանց փոխարինել է
ընդամէնը մէկ բառ. «նախագիծ»,
որը նախկինում աւելի գործածա-
կան էր ճարտարապետութեան աս-
պարէզում: Բարեբախտաբար, գիր-
քը դեռեւս «նախագիծ» է: Մէկ
բառով տարբեր բաներ ասելը լի-
ովին հաճոյ է մտաւոր ծոյլերին:
Գիւղատնտեսութեանը նուիրուած
հաղորդումներում գնալով աւելի
հազուադէպ է հնչում «դաշտ»-ը,
որը քոչել է բոլորովին ուրիշ
ասպարէզներ. «հարկային դաշտ»,
«իրաւական դաշտ», նոյնիսկ
«լրագրողական դաշտ» (երբ կա-
րելի է պարզապէս ասել մամուլ) եւ
այլն: Բայց անհեթեթ է, որ հայե-
րէնը հարստացնելու կոչուած գրչի
մարդը, տուրք տալով մտքի ծու-
լութեանը, համառօրէն գործածում
է «գրական դաշտ»-ը, երբ աւելի
սազական կը լինէին «գրական
կեանքը», «գրական ասպարէզը»,
«գրական պրոցեսը» կամ, վերջա-
պէս, «գրականութիւնը»: Հետաքր-
քիր է, «մագնիսական դաշտ»-ը
մնացե՞լ է իր բուն իմաստով: Միւս
բառը, որ կատարելապէս աղէտ դար-
ձաւ մեր գլխին, «գործընթաց»-ն
է: Որտեղ ասես որ չեն գործածում՝
տեղի-անտեղի: Լսում ես ու միտք
անում. ինչպէ՞ս էր կարողանում
այդքան մեր բազմաչար լեզուն
մի քսան-երեսուն տարի առաջ՝
առանց «դաշտի», «նախագիծի» եւ
«գործընթացի»...

Հանրայայտ է, որ նորաբա-
նութիւններ ստեղծելու համար լեզ-
ուին պիտի լաւ տիրապետես: Այ-
սօր, սակայն, պարզուած է, որ
անգրագէտներն էլ կարող են նոր
բառեր ստեղծել կամ ընդլայնել
իմաստային ոլորտը, ներողութիւն՝
«դաշտը»: Արդէն վաղուց արմա-
տացել է «որոշներ» ձեւը. օր չկայ,
որ ազգային էկրանից չլսես այս
անհեթեթութիւնը, շատ հնարաւոր
է, որ վաղը յայտնուի բառարա-
նում: Մի՞թէ այդ մարդիկ չեն
սովորել, որ «որոշ»-ը յոգնակի չի
ընդունում, դրա համար կայ
«ոմանք»-ը, որն, ըստ երեւոյթի,
անծանօթ է ոմանց: Կամ ուսերէն
եւ-ից պատճենել են ձախաւեր
«ասո-
ցացուել»-ը, երբ այդ իմաստը
կարող էին արտայայտել «գու-
գորդուել»-ով: Կամ թէ լսում ենք՝
«անշուշտ է»: Այս բառն օժանդակ
բայի կարիք չունի, իր մէջ արդէն
«է» է պարունակում: Իմիջիայլոց,
այս սխալը հիմնականում լսում է
պարսակահայերէն: Կամ թէ լսում
ենք դարձեալ էկրանից «ի շնոր-
հիւ այսինչի...», երբ տուեալ միտքն
արտայայտելու համար պէտք է
ասուի «շնորհիւ», առանց ի-ի:
Կամ թէ լսելով (գոնէ արտաքինով)
մարդիկ են ելոյթ ունենում, եւ
տեսնում ես, որ չեն զանազանում
«իր»-ն «իրեն»-ից կամ «երբեւի-
ցէ»-ն «երբեւէ»-ից: «Երբեւէ այդ-
պիսի բան չեմ անի» վճռականօրէն
յայտարարում էր մէկը: Հաւատում
ենք, քանի որ «երբեւէ»-ն անցեալ

կատարեալն է, անցաւ-գնաց: Հնչեց
նաեւ. «Երբեւիցէ այդպիսի բան
չեմ ասել»: Դարձեալ հաւատում
ենք, քանի որ այս մէկն ապառնի է,
օրը կը գայ՝ կը տեսնենք: Ասում են.
«Իրեն կարծիքով», երբ պէտք է
ասել. «Իր կարծիքով», բայց եւ
ճիշտ կը լինի, եթէ ասեն. «Այդ
կարծիքն իրենն է»:

Մէկ այլ վտանգ, որ գալիս է
աղաւաղուած արեւմտահայերէնից:
Արդէն վաղուց հայկական անուն-
ները ֆրանսերէն կամ անգլերէն
գրելիս են թարգմանում են տարօրի-
նակ փոփոխութեան. Կարոն դառ-
նում է Garo, Տէր-Յակոբյանը՝ Der
Hagobian, Տիգրանը՝ Dikran, Գէ-
որգը՝ Kevork, Կիրակոսը՝ Guiragos,
Կայծակը՝ Gaydzag եւ այլն: Հնչիւ-
նական այս աղաւաղումներն այժմ
ֆրանսերէնից ու անգլերէնից սկսել
են անցնել արեւելահայերէն. հա-
յաստանեան մամուլում վերջերս
յայտնուեց ամերիկահայ քաղաքա-
գէտի ազգանունը «Գիրաֆոսեան»
եւ ֆրանսահայ դերասանի ազգա-
նունը՝ «Բաբագեան» տառադար-
ձումով: Հաւանաբար չգարմանամ,
եթէ նոյն լրատուամիջոցներում
վաղը տեսնեմ Վահրամ Բաբագեան
գրելաձեւը: Հայերի ջախջախիչ
մեծամասնութիւնն այսօր ասում է
«կապուեալ», «փորձով» («Արա,
հըլը, փորցուի ըտենց բան արա...»),
երբ ճիշտ ձեւը «կապուել»-ն ու
«փորձել»-ն է: Ժամանակ առ ժա-
մանակ լսում ենք «ունթուել»,
«անկանալ» (այսպէս արտասա-
նում էր ժողովրդական արտիստը
բեմից եւ վերջերս արտասանեց
բանասիրութեան դոկտորը՝ հե-
ռուստաէկրանից), «տուժովել»,
«առաչի անքամ», «հիւրանոց»
(արտասանութեան այս կերպը լսում
ենք բանասիրութեան մէկ այլ դոկ-
տորի բերանից)...

Այսպիսով, հասանք փողոցի
լեզուին, որն անսասան հաստատ-
ուել է մեր էկրաններում: «Ասում
ա, խօսում ա, էս ա, էտ ա, էն ա...»:
Հասկանալի է, որ մարզինալա-
ցուող հասարակութիւնը պիտի
խօսի մարզինալների լեզուով, բայց
խայտառակութիւն է, երբ նման
խօսելակերպը, փաստօրէն, քաղա-
քացիական իրաւունք է ստանում
ազգային էկրանում, եւ հիմնակա-
նում սերիալների կործանարար
ազդեցութեամբ:

*** Կարծում եմ, անօգուտ է
կոչ անել այս ասպարէզի համար
պատասխանատու պաշտօնեաների
հայրենասիրական զգացումներին,
ինչպէսեւ մեր պետութեան առա-
ջին դէմքերին, քանի որ նրանք
տեսնում են ամէն ինչ, յուսամ,
նրանց ականջին հասնում են ժա-
մանակ առ ժամանակ հնչող բողբո-
ներն ու տագնապները, ենթադրում
եմ նաեւ, որ նրանց միջավայրում
խօսուել է այս ինդիւրների մասին:
Չենք կասկածում, որ նրանք եւս
մտահոգուած են, բայց աւետարա-
նական իմաստութիւնն ասում է, որ
ծառը պողով է ճանաչում. անցած
տարիների ընթացքում նրանց կող-
մից որեւէ վճռական քայլ չտեսանք
եւ, անկեղծ ասած, յոյս էլ չունեմ,
թէ կը տեսնենք: Ուստի, ելնելով
այսօրուայ մեր շահատենչ հասա-
րակութեան մտայնութիւնից, ուր
ոչ թէ մարդն է ամէն ինչի շարք,
այլ՝ Նորին Մեծութիւն Փողը, աւե-
զանք սահմանուի լեզուական խե-
ղձմների համար, այն էլ՝ ոչ թէ

Շար.ը էջ 20

ԱՄԵՐԻԿԱՅԻՆ ԶԻՆԵԱԼՆԵՐ

ՎԱՀԷՄԵՍՐՈՊԵԱՆ

«Ամերիկահայ գինեալներ»
("American Armenian Legion") կազ-
մակերպութիւնը, որ ստեղծուել է
2007թ. Զան (Յովհաննէս) Սու-
րուչլեանի կողմից, շարունակում է
իր հայրենասիրական, հայապահ-
պանման աշխատանքները ԱՄՆ-ում
ապրող հայ երիտասարդների, մարդ-
կանց լայն խաւերի հետ: Նրա
կազմում ընդգրկուած են ԱՄՆ-ի՝
ՀՀ ԶՈՒ-ում ծառայած գինուորներ
եւ սպաներ արցախեան ազատամար-
տիկներ, երիտասարդներ եւ այլ
խաւեր ներկայացնող քաղաքացի-
ներ:

Կազմակերպութիւնը Զ. Սու-
րուչլեանի ղեկավարութեամբ
ներկայացուած է Հայոց Յեղա-
պանութեան 100-ամեակի ոգեկոչ-
ման Միացեալ Մարմնի կազմում,
50-ից աւել այլ կազմակերպու-
թիւնների հետ միասին եւ իր աշ-
խատանքներն է համակարգում այդ
կազմակերպութիւնների հետ:

Անցնող տարուայ ընթացքում
մասնակցել է Հայոց Յեղա-պանու-
թեանը նուիրուած մոմավառութեա-
նը, Հոլիվուտի քայլարշախն, Մոն-
թեպելոյում կազմակերպուած
միջոցառմանը, որտեղ Հայոց Յե-
ղապանութեանը նուիրուած յու-
շարձանին տեղադրել է ծաղկեպակ:
«Սատար» հաշմանդամների հասա-
րակական կազմակերպութեան հետ
կազմակերպեց Շուշիի ազատագրման
21-րդ տարեդարձի տօնակատարու-
թիւնը "Piere Garden" ռեստորանում:

«Ամերիկահայ գինեալներ»
կազմակերպութեան անդամներն ակ-
տիւօրէն մասնակցում են Լոս Ան-
ճելոսի հայ համայնքում կազմա-
կերպող բազմաթիւ միջոցառում-
ների՝ իրենք էլ են կազմակերպում
նմանատիպ նաւաքներ: Տարուայ
ընթացքում մի քանի անգամ կազ-
մակերպուել են 2-3 օրուայ քեմ-
փիզներ եւ կրակային մարզումներ:

«Ամերիկահայ գինեալներ»
կազմակերպութիւնը ցանկանում է
հաւաքագրել աւելի շատ երիտա-
սարդների, որոնց հետ անց է
կացնում ֆիզիքական վարժանքներ,
կրակային մարզումներ (հրաձգա-
յին տարբեր տեսակի գէնքերից),
արտակարգ իրադրութեան պայ-
մաններում ինքնասպասարկման,
ինքնակառավարման, փոխօգնու-
թեան, փրկարարական վարժանք-
ներ, հայոց պատմութեան եւ հայ

թագաւորների ու զօրավարների-
ու ազգայնականների, յաղթանակների
նուիրուած դասախօսութիւններ:

Պարբերաբար անց են կացուած
պիկնիկներ ընդլեռն գրկում եւ
արշաւներ՝ դէպի լեռներ, տեսար-
ժան վայրեր եւ այլն:

Կազմակերպութեան անդամներն
իրենց մասնակցութիւնն են բերում
նաեւ տարբեր տեսակի ակցիաներին,
բողոքի ցոյցերին, որ կազմակերպ-
ւում են համայնքում գործող տար-
բեր կազմակերպութիւնների կողմից:
Յաճախակի հրաւիրուում են
մասնակցելու այլ միջոցառումների,
որտեղ ներկայանում են իրենց հա-
մագգեստներով եւ որոշակի միջո-
ցառ ստեղծում այդ միջավայրում:

Մասնակցում են նաեւ տօ-
նախմբութիւններին՝ ձեռք բերելով
տաղաւար, որտեղ ցուցադրում են
գովազդային տեսանիւթ կազմա-
կերպութեան գործունէութեան մա-
սին եւ վաճառում կազմակերպու-
թեան խորհրդանիշով վերնա-շա-
պիկներ եւ այլ իրեր:

«Ամերիկահայ գինեալներ»
կազմակերպութիւնը կապեր է հաս-
տատել ՀՀ ԶՈՒ ՊՆ-ը կից գործող
«Հայկական լեգիոն» (հրամանա-
տար՝ արցախեան ազատամարտիկ
Աղասի Կարապետեան) կազմակեր-
պութեան հետ: Նմանատիպ կապեր
են հաստատուել նաեւ ՀՀ-ում գոր-
ծող «Ժայռ» հասարակական
կազմակերպութեան հետ (հրամա-
նատար՝ ՀՀ ԶՈՒ պահեստազօրի
գնդապետ Ալիկ Մինասեան), որոնց-
հետ միասին, հեռակայ կարգով
նշուեց ՀՀ անկախութեան օրը «Նոր
սերունդ» կազմակերպութեան
միջոցառման ժամանակ (պատ-
րաստուեց տեսանիւթ, որը
ցուցադրուեց Հայաստանում):

«Ամերիկահայ գինեալներ»
կազմակերպութիւնը հաճոյքով կը
համագործակցի նաեւ այլ կազմա-
կերպութիւնների հետ, որոնք մտա-
հոգուած են հայերի երիտասարդ-
ների հայեցի դաստիարակման,
նրանց մօտ հայրենասիրութեան,
հայու գաղափարների լայն
տարածման գործում:

Ցանկացողները կարող են
կապուել americanarmenian-
legion@gmail.com էլեկտրոնային
փոստով կամ American Armenian
Legion կայքէջով Facebook-ով:

«Ամերիկահայ գինեալներ»
կազմակերպութեան լրատուական
ծառայութեան պետ՝

ՆԱԽԱՃԱՇ

**Կազմակերպութեամբ՝
Կիլիկեան Բարեգործական
Միութեան**

**Տեղի կ'ունենայ
Կիրակի 8 Դեկտեմբեր, 2013
Առաւօտեան ժամը 10:00-էն սկսեալ
Raffi's Restaurant
3887 E. Sierra Madre Blvd.
Pasadena, CA 91107**

**Հասոյթը պիտի յատկացուի Հալէպի
Կիլիկեան ձեմարանին
Մուտքի նուէր՝ \$15**

ԸՆԿՈՒԾՈՒԹԻՒՆԸ (DEPRESSION) ԿՐՆԱՅ ԱԶԴԵԼ ԾԻՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Հոգեբանական հարցերը եւ անհանգստութիւնները առնչուած են ֆիզիքական առողջութեան հետ: Երբեմն ֆիզիքական հարցերը կրնան յառաջացնել հոգեբանական անհանգստութիւններ, իսկ այլ պարագաներու՝ հոգեբանական անհանգստութիւնները կրնան ժխտական ազդեցութիւն ունենալ մարմնին վրայ:

Հոգեբանները մտահոգող ամէնէն հաւանական հոգեկան անհանգստութիւնն է ընկճուածութիւնը, որ նշմարելիօրէն կը տկարացնէ մարմինը եւ կ'ազդէ ֆիզիքական առողջութեան վրայ: Նախապէս գիտնականներ յայտնաբերած են թէ այս անհանգստութիւնը կրնայ նոյնիսկ տկարացնել մարմնի դիմադրողական դրութիւնը (immune system) եւ հետեւաբար կրնայ պատճառ դառնալ բորբոքումներու:

Նոր ուսումնասիրութիւն մը ցոյց կու տայ թէ ընկճուածութիւնը կրնայ նաեւ ազդել ծինէրուն վրայ՝ գանոնք ենթարկելով փոփոխութեան: 2,400 անձերու մասնակցութեամբ ուսումնասիրու-

թիւն մը ցոյց կու տայ թէ ճնշուածութիւնը կրնայ արագացնել բջիջներու փճացման գործընթացը: Նշենք, որ բջիջներուն մաս կազմող telomere-ներու հասակը ցոյց կու տայ բջիջներու առողջութեան մակարդակը: Որքան երկար ըլլան telomere-ները այնքան առողջ կ'ըլլայ բջիջը, որովհետեւ անոնք կը պահպանեն բջիջներու DNA-ները:

Գերմանական այս ուսումնասիրութեան շնորհիւ ի յայտ կու գայ թէ ընկճուածութենէ տառապած մարդոց մօտ telomere-ները ընդհանրապէս աւելի կարճ ըլլան: Գիտնականներ կ'եզրակացնեն թէ ընկճուածութենէ տառապող մարդիկ կրնան 4-էն 6 անգամ աւելի կանուխ ծերանալ:

Կարեւոր է միշտ ի մտի ունենալ, որ որքան շուտ անդրադառնանք մեր հարցերուն այնքան դիւրին եւ արդիւնաւոր կ'ըլլայ անոնց բուժումը: Յատկապէս հոգեբանական հարցերու պարագային, նախընտրելի է կանխարգիլել անհանգստութիւններու բարդացումը եւ անմիջապէս դիմել մասնագէտներու օգնութեան:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻՆ ԱՄԵՆԷՆ ՀԱՒԱՆԱԿԱՆ ՕՐՆ Է ԾԻԱԽՈՏԷՆ ՁԵՐԲԱԶԱՏՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ծխախոտի մոլորներու մասնակցութեամբ հետաքրքրական ուսումնասիրութիւն մը ցոյց կու տայ թէ մարդիկ ընդհանրապէս ծխախոտ ծխելէ հրաժարելու որոշում կ'առնեն Երկուշաբթի օրերը: Այս ուսումնասիրութեան արդիւնքները հիմնուած են 2008-էն 2012 թուականներուն ընթացքին Google-ի որոնումներուն հիման վրայ: Հետազոտողներ 4 տարուան ընթացքին քննած են անգլերէն, չինարէն, փորթուգալերէն, սպաներէն, ֆրանսերէն եւ ռուսերէն լեզուով Google-ի կայքէջին միջոցով կատարուած որոնումները, որոնք կապուած են ծխախոտ ծխելու սովորութեանէն ձերբազատուելու հետ:

Հետազոտութեան աւարտին ի յայտ կու գայ, թէ մարդիկ Երկուշաբթի օրերը 25 առ հարիւր համեմատութեամբ աւելի հետաքրքրուած կ'ըլլան ծխախոտէն ձերբազատուելու գծով: Անգլերէն լեզուի պարագային, Երկուշաբթի օրերը այս համեմատութիւնը 67 առ հարիւրով աւելի բարձր է բաղադրուած Ուրբաթ օրերուն: ՄԱԿին պատկանող՝ World Health Organization-ին համաձայն՝ ներկայիս աշխարհի վրայ մէկ միլիարդ անձ կ'օգտագործէ ծխախոտ:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ ծխախոտ օգտագործող մարդոց 70 առ հարիւրը կը

փափաքի ձերբազատուիլ այս սովորութեանէն եւ մօտաւորապէս 50 առ հարիւրը ջանք կը թափէ այս գծով: Ըստ հետազոտողներուն, ծխախոտէն ձերբազատուելու փափաքը իր գագաթնակէտին կը հասնի նոր տարուան գիշերը:

Հոգեբաններ կը շեշտեն, որ ծխախոտի դէմ պայքարելու ամէնէն կարեւոր եւ հիմնական քայլը այս գծով որոշում առնելն է: Որոշումէն ետք շատ կարեւոր է ճշդել այս հակաառողջապահական սովորութեան վերջ դնելու ժամանակը: Երկուշաբթի օրերէն բացի, մարդիկ ընդհանրապէս կ'որոշեն հրաժարիլ ծխախոտ օգտագործելէ Յունուար մէկին:

Որոշում առնելու կողքին անհրաժեշտ է պահպանել որոշումը եւ կառչած մնալ անոր: Կամքը բաւարար չէ նման վատ սովորութիւններ ոչնչացնելու համար, որովհետեւ հոգեբանական մոլորութեան կողքին, գոյութիւն ունին նաեւ ֆիզիքական (այս պարագային ուղեղի հետ կապուած) գործօններ, որոնք կամքի սահմաններէն դուրս են: Դժուար է կառավարել ուղեղի մէջ գոյութիւն ունեցող աշխատանքները, հորմոնի արտաճումները եւ ջղային դրութեան գործընթացը: Հետեւաբար, թելադրելի է, որ մարդիկ դիմեն մասնագիտական միջամտութեան՝ իրենց վատ սովորութիւններէն ձերբազատուելու համար:

ԲԱԲԱՐԱՐ ՔՆԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԾՇԴԵԼ ՍՈՒՐԾ ԽՄԵԼՈՒ ԺԱՄԵՐԸ

Վերջին տարիներուն, գիտնականներ մեծապէս հետաքրքրուած են քաֆէյինի ազդեցութիւններով, որովհետեւ աշխարհի բնակչութեան մեծ մասը մեծ քանակութեամբ սուրճ կամ քաֆէյին պարունակող այլ խմիչքներ կը սպառեն օրական դրութեամբ: Ոմանց պարագային, սուրճի սպառումը կը հասնի օրական հինգ կամ վեց գաւաթներու:

Բարեբախտաբար, սուրճը ունի բազմաթիւ առողջապահական օգուտներ, որոնք յայտնուած են շնորհիւ գիտական փորձարկումներու: Սակայն, այս չի նշանակել որ պէտք է մոռնանք անոր հետեւանքները մանաւանդ երբ սուրճը կը սպառենք մեծ քանակութեամբ:

Առաւօտեան երբ արթնանք անմիջապէս սուրճ կը խմենք:

Առաւօտուն սուրճ խմելը թէ՛ արեւելեան եւ թէ՛ արեւմտեան մշակույթներու մէջ դարձած է սովորութիւն, որովհետեւ ըստ գիտութեան սուրճին մէջ գտնուող քաֆէյինը մեծ դեր ունի ուղեղը արթուն պահելու աշխատանքին մէջ:

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ

The Paradox of Choice: Why More Is Less վերնագիրը կրող գիրքը կ'արծարծէ ներկայ կեանքի ամէնէն հիմնական հարցերէն մէկը՝ ճնշուածութիւնը (stress): Այս գիրքին հեղինակն է ամերիկացի հոգեբան՝ Barry Schwartz, որուն համաձայն՝ 21-րդ դարու ճնշուածութեան պատճառն է ոչ միայն բազմաթիւ ընտրութիւններ կատարելու պահանջը, այլ նաեւ՝ իւրաքանչիւր ընտրութեան պարագային բազմաթիւ այլընտրանքներու գոյութիւնը:

Schwartz նաեւ կը քննարկէ թէ այս հարցը բոլորս կը դիմագրաւենք ոչ միայն հոգեբանական հարցերու պարագային՝ այլ գրեթէ կեանքի բոլոր տարբեր ոլորտներուն մէջ: Ըստ հեղինակին, անցեալին մարդոց ընտրութիւն կատարելու գործընթացը աւելի դիւրին էր քան հիմա՝ որովհետեւ ընտրութիւններու տարբերակները թիւով աւելի նուազ էին:

The Paradox of Choice: Why More Is Less գիրքին մէջ հեղինակը նշած է հետաքրքրական ուսումնասիրութեան մասին, որուն ընթացքին երբ մասնակիցները ենթարկուեցան այլընտրանքներու բազմաթիւ տարբերակներու անոնց մօտ բարձրացաւ շփոթութիւնը եւ ճնշուածութիւնը, իսկ նուազեցաւ՝ որոշում առնելու կարողութեան մակարդակը: Այս ուսումնասիրութեան մէջ անոնք որոնք ենթարկ-

վա քաֆէյինի եւ քունի գծով վերջերս կատարուած ուսումնասիրութիւն մը կը հաստատէ թէ քաֆէյինը կրնայ խանգարել գիշերուան քունը: Սակայն, հետաքրքրականը այն է, որ նոյնիսկ կէսօրուան ընթացքին քաֆէյինի սպառումը կրնայ գիշերուան քունը նուազեցնել մէկ ժամով:

Օրական երկուքէն երեք գաւաթ սուրճի սպառումը կրնայ ունենալ օգուտներ, սակայն քանակի կողքին կարեւոր է նաեւ ճշդել սուրճ խմելու ժամանակը: Հետազոտողները կը թելադրեն քնանալէն առնուազն վեց ժամ առաջ մարմինը գերծ պահել քաֆէյին պարունակող խմիչքներէ, որոնցմէ ամէնէն նշանաւորն է՝ սուրճը: Այս ուսումնասիրութեան մասին գրուած է Journal of Clinical Sleep Medicine-ի մէջ:

Ձեր առաւօտեան սուրճը խմեցէք մեծ հաճոյքով, սակայն կէսօրէ ետք զայն փոխարինեցէք համեղ օշարակով կամ տաք թէյով, որպէսզի կարենաք հանգիստ քնանալ գիշերը:

ուեցան թիւով քիչ տարբերակներու եւ պէտք էր ընտրելին անոնցմէ մէկը՝ ինքնավստահութեամբ եւ կարճ ժամանակի մէջ կատարեցին իրենց ընտրութիւնը:

Հետաքրքրական է, որ ներկայ կեանքի պայմաններուն պարզեւած այլազանութիւնը եւ տարբերակները կարճ ժամանակի վրայ մեզի հաճոյք եւ գոհունակութիւն կը պատճառեն, սակայն ի վերջոյ կրնան մեզ շփոթի ենթարկել եւ պատճառ դառնալ սխալ որոշումներու: Schwartz կը բացատրէ, որ այնքան շատ եւ հասանելի են մեր այլընտրանքները, որ մեր առած որոշումը դիւրութեամբ կրնանք փոխել: Ան այս տրամաբանութեամբ կը բացատրէ ամուսնալուծումներու բարձր թիւը, աշխատանք փոխելու սովորութիւնը, նիւթական պարտքերը, եւ այլն:

Այս հարցով հետաքրքրուողներու համար հաճելի կրնայ ըլլալ հոգեբան եւ ընկերային տեսութեան դասախօս՝ Barry Schwartz-ի նորահրատակ գիրքը՝ The Paradox of Choice: Why More Is Less:

Schwartz հետեւած է Նիւ Եորքի համալսարանի հոգեբանութեան դասընթացքներուն եւ իր PhD վկայականը ստացած է Փենսիլվենիոյ համալսարանէն:

Հեղինակին նախաձեռնած հետազոտութիւններուն մասին կարելի է մանրամասն տեղեկութիւն ստանալ՝ New York Times ամսաթերթէն:

ԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Գալիֆորնիայի հայ գրողներ միութիւնը կազմակերպում է արձակագիր Ռոբերտ Յարութիւնեանի «Երկնկաթ օրսիդիան» գրքի շնորհանդէսը, որը տեղի կ'ունենայ Հինգշաբթի օրը՝ Գեկտեմբերի 5-ին, ժամը 5.30-8.00 Կլեմտէյի հանրային գրադարանում:

Հասցէն՝ 222 Harvard Glendale
Մուտքն ազատ է, կազմակերպում է հիւրասիրութիւն:

ԿՀԳՄ վարչութեան նախագահ Գեորգ Գրիստիւնեան

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՍԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆԵՐ՝
ՇԵՆԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՀԱՅԵՐԵՆԻ ՆԱԽԿԻՆ ՈՒՍՈՒՑՉՈՒՅԻ ՏԻԿԻՆ ԱՐՓԻ ԱՐՍԼԱՆԵԱՆ Ի ՊԱՏՈՒԻ

Շաբաթուաթիվ 14-էն

րան՝ «Ճնճողուկները»: Թուամանեանի կենսագրական գիծեր Power-Point presentation, պատրաստութիւն՝ Վան Ոսկեան. ներկայացուցին Սարին Ասլանեան եւ Արմէն Աբրահամեան, երեքն ալ 9-րդ դասարանէն:

Նախակրթարանի երգչախումբ՝ Glee Club, «Ամպի տակից», «Կաքաւիկ»՝ Recorder-ի վրայ



մենանուագ՝ Թամար Գարակէօզեան, «Գարուն - Երեւան», մեներգ՝ Անահիտ Չոլաքեան: Power-Point presentation լուսանկարներ եւ աշակերտական լիշողութիւններ Տիկին Արսլանեանէն (Պատրաստած էին՝ Նիքոլայ Փափագեան, 11-րդ եւ Քէոզն Առաքելեան, 10-րդ դասարան), նոյն պահուն «Սիրելի Ուսուցիչ» մեներգ՝ նախկին աշակերտուհի Անիսա Եուսէֆի, դաշնամուրի ընկերակցութեամբ Օրդ. Արուս Անդրէասեանի:

Թատերական պատկերներ Թուամանեանէն՝ «Խօսող Ձուկը», «Սուտասանը» եւ «Անխելք Մարդը», 5-րդ դասարան: Խաչատրեանի կենսագրական գիծեր Power-Point presentation, պատրաստեց եւ ներկայացուց Լիլիթ Մարտիան, 11-րդ դասարան: Դաշնամուր, Խաչատրեան՝ Sonatine 3-րդ մաս, Նաչուր Տէր Պետրոսեան, 7-րդ դասարան: Պալէ, «Etude» Խաչատրեան, Ֆրիշա, Ֆէյթ եւ Կապրիէլլա Քիլէնեան քոյրեր (4-րդ եւ 5-րդ դասարաններ): Թուամանեանէն բանաստեղծութիւններ՝ 9-րդ դասարանէն Արիէլլա Մարգիսեան, Մոնիկա Խաչատրեան, էլիանա Կունճուեան, Երուանդ Մալխասեան եւ Քրիսթինէ Քէշիշեան: Եւ վերջապէս, 6-րդ դասարանի երգչախումբ՝ «Իմ Երեւան», «Հայաստան Երկիր» եւ «Մեր Անունն է Հայկական

Բանակ», մեներգ՝ Էմըլի Պեանիլեան: Գեղարուեստական յայտագիրը բացառիկ էր, թէ՛ որակով եւ թէ՛ աշակերտներուն կատարելագործութեամբ: Կը շնորհաւորենք բոլորը:

Հանդիսութեան աւարտին, բոլորին դէմքին վրայ ուրուագծուած գոհունակութեան ժպիտը ցոյց կուտար ամիս մը ամբողջ կատարուած աշխատանքին յաջողութիւնը:

Մեծապէս շնորհաւորելի են բոլոր աշակերտները անխտիր,

որոնք իրենց լրջութեամբ, պահուածքով, արուեստի բարձր մակարդակով՝ որակ ապահովեցին հանդիսութեան: Արժանին պէտք է մատուցել նաեւ երաժշտութեան գոյգ ուսուցչուհիներուն՝ Տիկին Քրիստինա Խոջոյեանն ու մանաւանդ Օրդ. Արուս Անդրէասեանին, ինչպէս նաեւ հայերէնի բաժանմունքի բոլոր ուսուցիչներուն (Տիկին Մարալ Ոսկեան՝ Թուամանեանի թատերական պատկերներ եւ հանդիսութեան կազմակերպիչ, Տիկին Ռոզալին Մատոյեան՝ Power-Point-ի պատրաստութիւն եւ գիրքերու վաճառք, Պրն. Յովհաննէս Գուճրուեան՝ Power-Point-ի պատրաստութիւն եւ արտասանութիւն, Տիկին Աննա Եարաթեան՝ լուսանկարահանում, Տիկին Սեւան Տէր Պետրոսեան՝ վիտէօ նկարահանում, Օրդ. Ջեփիլու Տէմիրճեան եւ Տիկին Թագուշ Նալպանտեան՝ քուլիսներու ետին եւ Պրն. Հրաչ Սեփեթճեան՝ հանդիսավար): Շնորհակալութիւն լոյսի եւ ձայնի պատասխանատու Պրն. Վիգէն Մոմճեանին եւ անոր օգնական՝ 11-րդ դասարանցի Լիլիթ Մարտիանին:

Յատուկ շնորհակալութիւն նաեւ Մնողա-Ուսուցչական Մարմինին (PTO), հանդիսութեան աւարտին պատրաստած կոկիկ հիւրասիրութեան համար:

ԱՊՐԻՔ ՏՂԱՔ ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԵՒ ԵԶԱԿԻ ԵՐԵԿՈՅ ՄԸ

Շաբաթուաթիվ 14-էն

Անդրանիկ Պաղտասարեան քարտէսի վրայ մանրամասնօրէն բացատրեց հիմնադրամի այս տարուայ շինարարական ծրագիրը:

Ապրիլ ք տղաք. ձեր հաճելի եւ անթերի սպասարկութեան համար:

Ապրիլ ք տղաք. ձեր հրամցուցած հայաշունչ յայտագրին համար:

Ապրիլ ք տղաք. այս ազգանուէր երեկոն կազմակերպելու համար:

Երեկոն հասաւ իր նպատակին. աշակերտները յաջողեցան հանգանակել պատկառելի գումար մը, որուն շնորհիւ անոնք ո՛չ միայն մասնակից դարձան Հայաստան Համահայկական Հիմնադրամի դրամահաւաքին, այլ նաեւ անոնք նպատած պիտի ըլլան Հայաստանի ու Արցախի տնտեսութեան եւ ապահովութեան՝ Վարդէնիս Մարտակերտ մայրուղիի շինարարութեան:

Ապրիլ ք տղաք:

2եր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863

ՊԱՐՈՆ ՅԱԿՈՒ ՅԱԿՈՒԲԱՆԻ ԽՕՍՔԸ

Շաբաթուաթիվ 14-էն

Լիբանանի քաղաքացիական պատերազմին հետեւանքով՝ 1980-ին նորակազմ ընտանիքը կը տեղափոխուի Միացեալ Նահանգներ եւ կը հաստատուի Էնցինո-ի մէջ:

1987 թուականը անկիւնադարձ մըն է Արփի Արսլանեանի կեանքին մէջ, երբ ան կը միանայ Հ.Բ.Ը.Մ. Մանուկեան-Տեմիրճեան Վարժարանի ուսուցչական կազմին՝ որպէս մասնաւոր հայերէնի ուսուցչուհի:

Յաջորդ ութ տարիներու ընթացքին, ան խղճմտութեամբ եւ մեծ նուիրումով կատարեց իր ուսուցչական պաշտօնը, պատրաստեց մասնաւոր աշխատանք իւրաքանչիւր աշակերտի համար, մշակեց ծրագիր՝ որպէսզի հայերէն չգիտցող նոր աշակերտներ, որոնք կ'արձանագրուէին այդ տարիներուն արագօրէն անող մեր վարժարանը, սորվին այլուբեր, զարգացնեն ընթերցանութեան եւ հասկացողութեան կարողութիւնը, կարելի եղածին չափ շուտ միանալու համար իրենց կարգի հայերէնի դասերուն:

Իր ուսումնասնելութիւնը գինք մղեց՝ 1990-1994 տարիներուն, հետեւելու Միթիթարեան Հայերու Հայագիտութեան քառամեայ դասընթացքին՝ վկայուելով որպէս Հայերէնի մասնագէտ ուսուցչուհի եւ մանկավարժ:

1995-1996 տարեշրջանին երբ մեր վարժարանի աշակերտութեան թիւը հասած էր 900-ի, Տիկին Արսլանեանին վստահուեցաւ վեցերորդ դասարաններու Հայերէնի եւ Միջնակարգի կրօնքի դասերու պարտականութիւնը, պաշտօն մը՝ որ անձեռնհասօրէն, նուիրումով եւ մեծ սիրով կատարեց 16 տարիներ ամբողջ, իր հօրմէն եւ մօրմէն ստացած կրօնական, բարոյական եւ ազգային դաստիարակութիւնը ջամբելով իր շատ սիրելի եւ թանկագին աշակերտներուն, մինչեւ իր հանգստեան կոչուելը:

Իր իսկ բառերով, «Հոգին կը հրճուէր երբ ամէն առաւօտ դպրոցի շէմէն ներս ոտք կը դնէր», որովհետեւ դարձեալ առիթը պիտի ունենար իր խնամքին յանձնուած աշակերտներու միտքը զարգացնելու եւ մեր ազգային ինքնութիւնը դրոշմելու՝ անոնց մատղաշ հոգիներուն մէջ:

Արփի Արսլանեանի համար աշակերտը սիրաշահիլը եւ նիւթը սիրեցնելը առաջնահերթ մտահոգութիւններ էին: Այս գոյգ նպատակները յաջողեցնելու համար իր դասարանը ջերմ միջավայր մըն էր իր աշակերտներուն համար, ուր անոնք խանդավառութեամբ կուզային ամէն օր, նոր գիտելիքներով հարստանալու, ինչպէս նաեւ ծանօթանալու մեր մշակոյթի մեծերու գործերուն ու վաստակին:

Ան ջերմօրէն համոզուած էր որ աշակերտը իր դասարանին դուրս պէտք է գայ օրուայ դասը լաւապէս սորված եւ իւրացուցած: Երբեք աշակերտը չէր ծանրաբեռներ տնային ծանր պարտականութիւններով: Կը նախընտրէր գործօն դասաւանդութեան մօտեցումը, աշակերտները սերտօրէն մասնակից դարձնելով աշխոյժ դասաւանդութեան ընթացքին, նիւթի ըմբռնումին, բառապաշարի զարգացման, միաժամանակ սատարելով նաեւ անոնց խօսակցական հայերէնի զարգացման:

Տիկին Արսլանեան կարողութիւնը ունէր ընթերցանութեան

ամէն մէկ հատուածի մէջէն վեր առնելու բարոյական դասեր, հայերէն լեզուի ուսուցման կողքին՝ նաեւ աշակերտին նկարագիրը կերտելու հայ դաստիարակի օրինակելի կոչումով:

Մնողներէն մեծապէս յարգուած եւ գնահատուած էր ան, աշակերտներու նկատմամբ ցուցաբերած իր հոգածու եւ համբերատար կեցուածքին համար: Երբ ծնողներ իրեն կ'ըսէին՝ «Թէ ուսուցչու թիւն, թէ մայրութիւն կ'ընես», ինք համեստօրէն կը պատասխանէր. «Բոլորը մեր զաւակներն են»:

Խոր յարգանք եւ համոզում ունէր Հ.Բ.Ը.Միութեան առաքելութեան եւ հայ ժողովուրդի կատարած մեծ նպաստներուն նկատմամբ: Առիթը չէր փախցնէր աշակերտները դաստիարակելու՝ նաեւ Բարեգործականի վսեմ գաղափարներով:

Հայերէնի բաժանմունքի կազմակերպած բոլոր ձեռնարկներուն, գեղարուեստական բաժինը կը ճոխացնէր իր պատրաստած անհատական թէ խմբային արտասանութիւններով: Շատ կը սիրէր Մուշեղ Իշխանի «Հայ լեզուն տունն է հայուն» բանաստեղծութիւնը որ ամէն տարի կը սորվեցնէր վեցերորդ կարգի աշակերտներուն: Ամէն անգամ որ կ'ունկնդրէի այս պարզ լեզուով գրուած ոտանաւորը, բանաստեղծին «տան» պատկերացումը եւ Արփիին դասարանը կը նոյնանային իմ մտքիս մէջ, երբ աշակերտները միաբերան եւ խոր հասկացողութեամբ կ'արտասանէին՝

Հայ լեզուն տունն է հայուն՝ աշխարհի չորս ծագերուն,

Ուր կը մտնէ ամէն հայ՝ իբրեւ տանտէր նարագատ,

Կը ստանայ սէր ու սնունդ՝ սրտի հպարտ ցնծութիւն

Եւ բորանէն ու բուքէն՝ հոն կը մնայ միշտ ազատ:

Եւ ճիշտ այդպէս, Արփի Արսլանեանին դասարանը մեր դպրոցի միջնակարգի աշակերտութեան հարգատ տունը եղաւ տարիներ ամբողջ, ուր անոնք կը յաճախէին որպէս իր հարգատ զաւակները, ստանալու սէր ու հոգեկան սնունդ, գիտութիւն ու դաստիարակութիւն, զարգանալու եւ դառնալու համար հպարտ զաւակները հայ ժողովուրդին, որպէսզի օտար ազդեցութիւններէն եւ ալիստեման վտանգներէն միշտ ազատ մնան:

Սիրելի Արփի, Վարձքդ կատար, տարիներու նուիրումով աշխատանքդ կը շարունակէ արդիւնաւորուիլ այսօր մեր աշակերտներու եւ 1200-է աւելի շրջանաւարտներու առօրեայ կեանքին մէջ, ուր որ ալ ըլլան անոնք:

Վերջացնելէ առաջ, քաղցր պարտականութիւնը ունիմ քեզի փոխանցելու վարժարանիս հոգաբարձութեան ատենապետ եւ Հ.Բ.Ը.Միութեան փոխ նախագահ՝ Պարոն Սիւնան Սիւնանեանի ջերմ բարեմաղթութիւնները, ինչպէս նաեւ հոգաբարձական կազմի գնահատանքը, տնօրէնութեան եւ պաշտօնակիցներու սէրն ու յարգանքը, եւ բազմահարիւր ծնողներու եւ աշակերտներու երախտագիտական ջերմ զգացումները:

Մեր բոլորին կողմէ քեզի կը մաղթենք առողջութիւն, երջանկութիւն եւ երկար կեանք՝ շրջապատուած քու սիրելիներովդ եւ օրէ օր բազմացող թոռնիկներովդ: Վարձքդ կատար՝ Ն

ՆԱՄԱԿԱՆԻ -ՏԵՍԱԿԱՆԻ

ՍԱՐԳԻՍ ՓՈՇՏՈՂԼԵԱՆ

Երբ սեւ ամպերը կուտակուեին ու պաղ հովը փչէ, բնութեան անգիր նամակն է որ կ'ըսէ.- պիտի անձրեւէ. վերջապէս, նամակը պատգամ մը, ըսելիք մը, միտք մը եւն... փոխանցող միջոցն է, նոյնիսկ՝ աղանձի կտուցով ձիթենիի ճիւղը:

Գալով՝ գիրերու գործածութենէ ետք, ի հարկէ նամակը դարձաւ շատ բնական, հեռուները կապող միջոց՝ նամանաւանդ: Հազորդակցական կերպ հին դարերէն եւ ցարդ կը գործածուի մտածումներ արտայայտելու, փրկիտփայտութիւն թէ այլ: Անձնապէս շատ տպաւորուած եմ Սենեքայի «Նամակներ ստոյիկէ մը» գիրքէն: Ինչ եւ է:

Ունինք ստուար հատորներ հայ հեղինակներէ, որոնցմէ՝ Մատթէոս Մամուրեան, Ե. Օտեան, Ծ. Ծահնուր, Նորայր Բիւզանդացի, եւ ամէն գրողէ փունջ մը կամ փնչիկ մը. ամբողջ գրադարան մը կարելի է կազմել, վերջերս ալ լիբանանահայ Արմէն Յարութիւնեան, ուր երբեմն արուեստի մակարդակին կը մտնեն իր նկատառումները. ինչպէս նաեւ ուսուցիչ, բանաստեղծ, վասէ վահանի նամականին, ցարդ՝ վերջնագոյնը:

Նամակներ կան որոնք հրապարակախօսութիւններ են կամ ինչպէս Սենեքայի պարագային՝ փրկիտփայտութիւնը արտայայտելու միջոց, սակայն, նամակներ ալ կան անձէ անձ, մտերմիկ, որոնք երբեմն հասու կ'ըլլան հանրութեան... Արդեօք ճիշդ է գանոնք հանրութեան սեփականութիւնը դարձնել... Նոյնն ալ անտիպներու պարագային, արդեօք հեղինակը պիտի հրապարակէր... Առիթով մը խմբագիր մը ըսաւ ինձի.- «Կարդացի՞ր, Չարենցէն անտիպ մը ունինք» - ըսի.- «Այո, անտիպ ըլլալու արժանի»:

Անցնինք մի քանի հրապարակուած նամակներու:

Ախտ-մահացու հիւանդութիւն, լսած ենք թոքի հետ միացած որմէ՝ թոքախտ: Սկիւտարի սոխակը... մեռաւ թոքախտէ. վերջապէս մահացու:

Իսկ եթէ ախտը կապուած է Հայրենիքի հետ, կը խորհի թէ անձը պիտի մեռնէր իր ծննդավայրին՝ Հայրենիքին մէջ, սակայն

եկուր տես որ... կարդանք գինք իր նամակէն.- «Յիրաւի հայրենաստէն վերջ մարդ կրնայ եղեր Ոսկորախտ ալ ունենալ՝ Եղիային պէս: Կարօտցայ ափունքներ՝ գորս լուսնակը կը կամրջէ իր ծփանուտ ցոլա-ցումովը»: Ապա՝ Յեղին Սիրտը երգող բանաստեղծը տեղափոխուեցաւ Պոլիս:

«Ու ես կ'երթամ դէպի աղբիւրը լոյսին»... (Գ. Վարուժան): Անցնինք այլ նամակի մը՝ այս անգամ Արեւելեան կողմն աշխարհի՝ Վահան Տէրեանին, իր մէկ նամակին մէջ՝ ուղղուած Յ. Խանգատեանին՝ «Ինչ հաշիւներ են: Ճիշդ չէ՞: Աստուած վկայ, հաւաս չունեմ երկար նստել նամակ գրելու եւ կշռադատելու ամէն մի նախադասութիւնը - ախր հենց դրա համար էլ նամակ է, իսկ եթէ ամէն մի նախադասութիւնն ուզենայի կշռադատել, ապա յօդուածներ կը գրէի, իսկ ես լոկ ուզում էի մի քիչ շատախօսել քեզ հետ, ուրիշ ոչինչ»: Իսկ Չարենց.- Թուղթ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԻՆ, ԳՐՈՒԱՄ ԼԵՆԻՆ-ԿՐԱՏԻՑ

Իմ սիրելի Ակսել, չեմ մոռցել ես քեզ... Ահա նստած այստեղ, այս խտտաշունչ հեռու, Մտաբերում, յիշում, ու տես - գրում եմ ես Քեզ յանգաւոր նամակ:

Ահա, այս մէկն ալ յանգաւոր... ամէն ոք իր ոճով, իր նպատակին յարմարեցումի մօտեցումով, ոմանք արուեստի մակարդակը ունին նոյնիսկ նամակներու մէջ, ոմանք՝ շեշտը կը դնեն ըսելիքին ճշմարտացիութեան, ուղղութեան, վերջապէս... ի հարկէ, ընթերցողն ալ ունի իր յաւելումները:

Աւարտենք Տէրեանով.- Այս մէկը յորդոր է եւ պատգամ.- Վ. Խանգատեան - Յարութիւնեանին: Հա՛: Լսեցէք, ե՞րբ էք սովորելու հայերէն, ինչպէ՞ս չէք ամաչում, եւ Ձեր աղջիկը նոյնպէս, չէ՞ որ խոստացուած տիկնիկը նա ինձնից կը ստանայ միայն հայերէն իմանալու դէպքում, ոչ այլ կերպ:

Յ.Գ. Նորայր Բիւզանդացիի նամականիին գիրքին կողքը գծողին անունը չգտայ թէ եւ ՄԻԱԿ ԱՆՁՆ էի որ պէտք չունէի գիտնալու... ինչպէս նաեւ՝ Թ. Թորանեանի «Երկրէն հեռու երկրին մօտ» գրքոյկին պարագային:

Յ.Գ. Նորայր Բիւզանդացիի նամականիին գիրքին կողքը գծողին անունը չգտայ թէ եւ ՄԻԱԿ ԱՆՁՆ էի որ պէտք չունէի գիտնալու... ինչպէս նաեւ՝ Թ. Թորանեանի «Երկրէն հեռու երկրին մօտ» գրքոյկին պարագային:

ՀԱՅԵՐԵՆԻ ԽԼԱՑ(ՈՒ)ՈՂ ԱԿԱՆՁ

Շարունակուած էջ 16-էն

խորհրդանշական մի թիւ, այլ շօշափելի մի գումար: Հանրութեան աչքն ու ականջը խոթուող տխմարութեան եւ անգրագիտութեան համար պէտք է թանկ վճարել: Սինգապուրում հենց նման միջոցներով կարողացան քաղաքն աղտոտող խուժանին դարձնել գիտակից քաղաքացի:

Մեր լեզուի մաքրութիւնը նոյնքան կարեւոր է, մանաւանդ որ տրտուկներ են լսում, թէ մեր պիւտնէն դժուարութեամբ է լրացուած: Խնդրե՛մ, անսպառ աղբիւր: Երկու տարի առաջ անգլիական մի նախարար (Chris Bryant) Աբրիոնին բնորոշ ամբարտաւանութեամբ յայտարարեց, որ ֆրանսերէնը երկրորդական լեզու է: Եթէ ֆրանսերէնն է երկրորդական, հապա ի՞նչ ասեն սկանդինաւները, հոլանտացիք, լեհերը, հունգարները, ռումինացիք, մեր մասին էլ չեմ ասում... Քարանձաւային բարբարոսի եւ լիտիացած գաղութատիրոջ մտայնութիւն է սա, քանի որ «երկրորդական» լեզուներ չեն կարող լինել: Իսլանդերէնն այսօր գործածում է ընդամէնը 300.000 հոգի, բայց այդ լեզուով անցած ութ դարերի ընթացքում ստեղծուել են գլուխգործոցներ, որոնք ոչնչով չեն գիշում անգլերէնով ստեղծուածներին: 2 Չնայեա՞ծ այստեղ էլ որոշակի սկզբունք չի նկատուած: Օրինակ՝ «Հետք» օրաթերթը (27 Յուլիսի 2012թ.) գրում է՝ «Ֆունթ ստեղծուելով» Եթէ «Ֆունթ» ապա ինչո՞ւ «սՏեւլինգ» եւ ոչ թէ «սՏեւլինգ»:

Ո՞րն է տրամաբանութիւնը: Մեր փորձուած թարգմանիչներին մէկն էլ վերջերս գործածեց Արիսթոտել ձեւը... Պարզուած է 1600 տարի սխալ ենք գրել այս անունը: Բայց ինչո՞ւ երկու Տ-ից միայն մէկն է թ դարձրել: Աշխարհի բոլոր լեզուաբանները որ հաւաքուեն, հաւանաբար չկարողանան մեկնել այս առեղծուածը: 3 խորհրդային իշխանութիւնը կարողացաւ կարճ ժամանակում համատարած գրագիտութեան հասնել, իսկ այսօր, դարձեալ կարճ ժամանակում, ստեղծուեց տառաճանաչ անգրագիտութիւնը, որը միտում ունի համատարած դառնալու: 4 Այս բառն արդէն քաղաքացիական իրաւունք է ստացել նաեւ ՉԼՄ-ներում: 5 Անգրագիտութիւնների 99%-ն այդտեղից է սփռուած, գումարած հակազդարուեստական սերիալներին անշուկի աւերները, չասած մանրմունը «խնդրիկմիդիկ» եւ տափակ հաղորդումների մասին, կարելի է գալ այն եզրակացութեան, որ ազգային էկրանն, աւելի քան տասը տարի դիւերսիոն գործունէութիւն է ծաւալել սեփական ժողովրդի դէմ: Հասկանալի է, որ բոլորը Աբեղեան ու Աճառեան չեն, բայց, հաւանաբար, սխալների հետագայ տարածումը կանխելու համար, պէտք է ընդունելի մի ձեւ մշակել դրանք տեղնուտեղը շտկելու եւ սրբագրելու համար, ասենք՝ տողատակին անմիջապէս դրուի ճիշտ ձեւը կամ մէկ ուրիշ կերպ: Մեր լեզուի մաքրութիւնը շատ

աւելի կարեւոր է, քան որոշ անգրագետ, բայց յաւանաբար մարդկանց հիւանդագին ինքնասիրութիւնը: Ի վերջոյ, եթէ հայերէն չգիտեն, թող հանդէս չգան հեռուստատեսութեամբ: Վարակիչ հիւանդներին մեկուսացնում են առողջներին, անգրագետներին էլ պէտք է մեկուսացնել գրագետներին, քանի որ անգրագիտութիւնը նոյնպէս վարակիչ է եւ ոչ պակաս վտանգաւոր հասարակութեան համար:

«Մարգինալ» ասելով նկատի չունենք միայն ստորին խաւի լիւս-պենացուած հատուածը, այլեւ շքեղաշուք մեքենաներով երթեւեկող, լիքը գրպանով, բայց դատարկ գլխով, իրենք իրենց «էլիտար» համարող, կրիմինալ կամ կիսակրիմինալ տարրերին, որոնց բարգաւաճման համար իտէլական պայմաններ են ստեղծուել Հայաստանում: Այսօրուայ սերիալային «մշակոյթը» հենց սրանց «սոցիալական պատուէրի» արտայայտութիւնն է, նրանց հաւատոյ հանգանակը: 7 Մերձաւոր Արեւելքի հայութեան առօրեային քաջատեղեակ լրագրողներին մէկն ինձ ասաց. «Մի՛ դատապարտէք սերիալները, դրանք կարողացան Լիբանանի, Սիրիայի, Յորդանանի հայութեան ուշադրութիւնը վերջապէս շեղել թրքական սերիալներից, չասած այն մասին, որ Սփիւռքի միւս գաղութներում այդ ֆիլմերով հայերէն են սովորում»: Ուրեմն մի աղբից անցանք միւսին՝ թրքականից հայկականին... Միակ միւլթարութիւնն այն է, որ այդ աղբը մերն է: Իսկ աղբը ազգային պատկանելութիւն ունի... 8 Լիովին համաձիտ ենք սփրւ. քահայ վաստակաշատ մտաւորականին, երբ միեւնոյն առիթով նա տապալակ էր հնչեցնում իր թերթի էջերին. «Հարցը այլեւս լեզուի հարց չէ. արժանապատիւ ինքնութիւն ունենալու, սեփական դէմք ու դիմագիծ պահելու հարց է, Սփիւռքի մէջ թէ Հայաստանի: Հարցը դուրս կու գայ մեր՝ մտաւորականութեան, գրողներու, լեզուաբաններու, նոյնիսկ կրթական ու մշակութային հաստատութիւններու ու կազմակերպութիւններու ազդեցութեան սահմաններէն: Հարցը շարունակութիւնն է Աղէտին, անոր ընդդիմանալու՛, դիմադրելու՛ հարց է»: Բայց որքան լաւատես, եթէ չասենք միամիտ էր նա՝ գրելով. «Պետութեան, կուսակցութիւններուն ու ազգի ապագայով մտահոգ դեկավարութեան հարցն է...» (Վրէժ-Արմէն Արթիւնեան, «Հորիզոն», 19.12.2011թ.): 9 Չէ՞ որ գլխի ընկանք (ցաօք, ուշացումով), որ պէտք է տուրք դնել մարդկային սնափառութեան վրայ. մեքենաների, այսպէս կոչուած, «պրեստիժի» համարներ ստանալու համար այսօր պէտք է որոշակի գումար մուծել: Ի դէպ, ժամանակն է այդ գումարը կրկնապատկել, նոյնիսկ եւապատկել: Օրաւոր աճող սնափառութիւնն ու յիմարութիւնը գոնէ այդ կերպ օգուտ տան երկրին:

VA Print Media
 Book Printing • Hard Covers • Year Books
 Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
 Հին Գիրքերու Նորոգութեան Համար
 Հեռ. ձայնով՝ ՎԱՀԻ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
 1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
 Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
 vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

«ՔԱԶ ՆԱԶԱՐ»
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
 Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30
 Կլէմտէյի 380-րդ կայանից